

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՊԱՇՓԱԿԱՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

(տարածամանակյա քննություն)*

Բանալի բառեր – հպաշփականներ, քնայնացում, հնչույթային ենթակարգեր, ընդհանուր հնդեվրոպական լեզու, satəm և centum լեզուներ, հին հունարեն, փոյուգերեն:

1. Հարցի ընդհանուր դրվածքը

Հպաշփական հնչույթների առաջացումը *սատրմ* (satəm) խմբի հ.-ե. հին լեզուներում պատմահամեմատական հնդեվրոպաբանության մեջ մեկնաբանվել է իբրև հետնաքմային հպականների առաջին և երկրորդ քնայնացումների արդյունք¹, իսկ *քնական լեզվաբանությունը* դրանց ծագումը բացատրում է նախահնդեվրոպական լեզվի հետնաքմային հպականների հնչարտաբերական բնութագրերի քանակական կողմի զարգացումով²:

Նկատի առնելով, որ՝ ա) հին հայերենը հպաշփականներ տարբերակող հ.-ե. այն լեզուներից էր (հին հնդկերենի հետ միասին), որոնցում այդ հնչույթներն ունեին համակարգային արտահայտություն, բ) համեմատաբանական արդի տեսություններում հ.-ե. հետնալեզվայինների (густуральные) հնչույթային բնութագրերի հիմնախնդրի հանգուցալուծման համար, ի թիվս «լուսանցքային» համարված հ.-ե. լեզուների (ալբաներեն, լուվիերեն, թոխարական լեզուներ) տվյալների, կարևորվում են նաև հայերենի փաստերը³, հպաշփականների առաջացման հնդեվրոպաբանական վարկածի

*Հոդվածն ընդունվել է տպագրության 15.08.2020:

1 St u **Meie A.**, Введение в сравнительное изучение в индоевропейских языков, М.-Л., 1938, էջ 117-120, **Тронский И. М.**, Общиневропейское языковое состояние, Л., 1967, էջ 24-35, **Георгиев В. И.**, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, էջ 28-48, **Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. В.**, Индоевропейский язык и индоевропейцы, т. I, Тбилиси, 1984, էջ 83-116, **Семереньи О.**, Введение в сравнительное языкознание, М., 1980, էջ 71-81, **Майрхофер М.**, Индоевропейская грамматика, т. 2. Фонетика, «Новое в зарубежной лингвистике» (այսուհետև НЗЛ), вып. XXI, М., 1980, էջ 130-137, **Савченко А. Н.**, Сравнительная грамматика индоевропейских языков, М., 1974, էջ 61-71, **Красухин К. Г.**, Введение в индоевропейское языкознание, М., 2004, էջ 52, **Герценберг Л. Г.**, Краткое введение в индоевропейистику, Санкт-Петербург, 2010, էջ 33-39:
2 St u **Չարիեյան Յու.**, Հայերենը և նախահնդեվրոպական լեզուներ, Եր., 2001, էջ 46-126:
3 St u **Ուզանի Բ.**, Общее и индоевропейское языкознание, «Общее и индоевропейское языкознание», М., 1956, էջ 138-139, **Герценберг Л. Г.**, նշվ. աշխ., էջ 33-34: Վերոհիշյալ լեզուները ընդհուպ մինչև 20-րդ դարի կեսերը դասական հնդեվրոպաբանությունը համարել է «լուսանցքային»: Սակայն նախորդ դարի կեսերից, երբ հ.-ե. համեմատական լեզվաբանության մեջ սկսեցին վերանայվել մի շարք հիմնարար դրույթներ (հմմտ. նախալեզվյան վերականգնումներում դասական համարված հ.-ե. լեզուներին հին հնդկերեն, հին հունարեն, լատիներեն, առաջնայնություն սալը, բաղաձայնական տեղաշարժերի սկզբունքը, հպականների հնչույթային կարգերի տարբերակումը և այլն): Փոխվեց նաև վերաբերմունքը «լուսանցքային» համարված լեզուների, այդ թվում՝ հայերենի նկատմամբ: Այս

վե՛ր համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) տարի, թիվ 3 (71), հուլիս-սեպտեմբեր, 2020

տեսանկյունից հատուկ նշանակություն ունի հ.-ե. հետնալեզվայինների հնչյոթային կարգերի քանակի հարցը: Այդ առնչությամբ հնդեվրոպական լեզվաբանության մեջ վերջին հարյուրամյակի ընթացքում շրջանառվել է երկու հայեցակարգ:

Դրանցից մեկի համաձայն՝ հնդեվրոպական նախալեզուն ունեցել է հետնալեզվայինների երեք հնչյոթային կարգ՝ *հեղնաքմայինների* (*k, *g, (*k^h), *g^h), *քմայինների* (*k^ˆ, *g^ˆ, (*k^{ˆh}), *g^{ˆh}) և *շրթնահեղնաքմայինների* (*k^ʷ, *g^ʷ, (*k^{ʷh}), *g^{ʷh})⁴: 19-րդ դարի վերջին քառորդին այս տեսությունը մշակեցին Ա. Բեցցենբերգերը և Հ. Օստոնֆըլդը՝ հիմք ընդունելով իտալացի լեզվաբան Գ. Ասկոլիի տեսակետը (1870) հ.-ե. հետնալեզվայինների մասին: Այն կանոնական տեսք ստացավ Կ. Բրուգմանի «Հիմունքներ...»-ի («Grundriss...») 2-րդ հրատարակության մեջ (1916) և այդ հեղինակավոր աշխատության շնորհիվ մի քանի տասնամյակ գրեթե նույնությամբ ընդունվեց հնդեվրոպաբանության մեջ⁵: Ըստ երկրորդ հայեցակարգի, որը հիմնավորելու առաջին փորձն արել է Ա. Ֆիկլը (1873), նախալեզվին վերագրվել է հետնալեզվային հպականների երկու հնչյոթային կարգ՝ *հեղնաքմայինների* (*k, *g, (*k^h), *g^h) և *շրթնահեղնաքմայինների* (*k^ʷ, *g^ʷ, (*k^{ʷh}), *g^{ʷh}): Այդ հայեցակարգը ավելի մանրամասն մշակել է ֆրանսիացի լեզվաբան Լ. Ավեն, և որոշ ձգբրտումներով ընդունել է Ա. Մեյեն⁶: Այս վարկածի հիմքում հնդեվրոպական հին լեզուներում հիմք լեզվի հետնալեզվային հնչյոթների երկու տիպի անդրադարձների (ռեֆլեքսների) առկայության փաստն է. մի մասում՝ հետնաքմայինների և շրթնահետնաքմայինների (*կենտում* /centum/ լեզուներ), մյուսներում՝ քմայինների և հետնաքմայինների (*սապրում* /satəm/ լեզուներ): Ընդ որում, հ.-ե. հիմք լեզվում հետնալեզվայինների երեք հնչյոթային կարգերի տեսության համաձայն, *կենտում* խմբի լեզուներում հետնաքմայինների հնչյոթային կարգը նախասկզբնական (= ընդհանուր հնդեվրոպական) քմային և հետնաքմային հպականների միաձուլման արդյունք է (հմնտ. {*k'+*k} > k), իսկ *սապրում* խմբի լեզուներում՝ շրթնահետնաքմայինների և հետնաքմայինների միաձուլման արդյունք (հմնտ. {*k^ʷ+*k} > k)⁷: *Սապրում* խմբի լեզուներում, մասնավորապես՝ բալթոսլավոնականներում և հնդիրանականներում, քմայնացածներն առաջին շարքի ẽ˘, ɪ˘ ձայնավորներին և i˘ կիսաձայնին նախորդող դիրքում անցել են սուլաշականների⁸: Ընդ

առումով ուշագրավ է մասնավորապես, հ.-ե. վերականգնումներում հայերենի լեզվական փաստերի կարևորության մասին Է. Սակլակի գնահատականը (տե՛ս **Макаев Э. А.**, Значение армянского языка для реконструкции общеевропейского состояния, **ՊԲՀ**, 1967, N 1 (36), էջ 89):

4 Տե՛ս **Тронский И. М.**, նշվ. աշխ., էջ 27:

5 Տե՛ս **Георгиев В. И.**, նշվ. աշխ., էջ 28-29, **Тронский И. М.**, նշվ. աշխ., էջ 24:

6 Տե՛ս **Георгиев В. И.**, նշվ. աշխ., էջ 34-35, **Мейе А.**, Введение..., էջ 120:

7 Տե՛ս **Тронский И. М.**, նշվ. աշխ., էջ 25, **Семереньи О.**, նշվ. աշխ., էջ 73-74, **Майрхофер М.**, նշվ. աշխ., էջ 132:

8 Տե՛ս **Мейе А.**, Введение..., էջ 120, **Георгиев В. И.**, նշվ. աշխ., էջ 39-44, **Тронский И. М.**, նշվ. աշխ., էջ 25, **Савченко А. Н.**, նշվ. աշխ., էջ 64, **Барроу Т.**, Санскрит, М., 1976, էջ 75: Ոստ Վ. Գեորգիկի հնդիրանական և բալթոսլավոնական լեզուներում, «հավանական է՝ նաև այբաներենում և հայերենում», e, i, j հնչյոթներին նախորդող դիրքից բացի, քմայնացում տեղի է ունեցել նաև այդ հնչյոթներից առաջ գտնվող k^ʷ, kl, kr, g^ʷ տիպի կապակցություններում, այսինքն՝ նաև y-ից, l-ից, r-ից առաջ (տե՛ս **Георгиев В. И.**, նշվ. աշխ., էջ 40):

որում, հնդիրանականներում այդ երևույթը տեղի է ունեցել մինչև *e > a անցումը⁹: Քմայնացածներից սուլաշականների (սիբիրյանտների) անցման համար նշված լեզուներում ենթադրվել է քմայնացած ատամնայինների միջանկյալ շարքի առկայություն (հմնտ. *k' > t', *g' > d', *g'h > d'h): Այդպիսի վարկածի համար հիմք են տալիս «քաֆիրյան բարբառները, որոնք միջանկյալ դիրք են գրավում հնդկականների և իրանականների միջև»¹⁰:

Ուշագրավ է, որ երկու տեսակետների կրողներն էլ երկար ժամանակ՝ ընդհուպ մինչև նախորդ դարի 70-ական թթ., ընդունել են, որ ինչպես *կենսություն*, այնպես էլ *սայրում* խմբի լեզուներում առկա են հ.-ե. հետնալեզվայինների միայն երկու հնչույթային կարգերի՝ հետնաքմայնացածների և շրթնահետնաքմայնացածների անդրադարձները: Դեռևս 19-րդ դարի վերջին ալբաներենում հ.-ե. քմայնացածների անդրադարձներ ցույց տալու փորձ արեց Հ. Պեդերսընը «Ալբաներենի հետնալեզվայինները» (1900) աշխատության մեջ¹¹: Նրան պաշտպանեց հայտնի ալբանագետ Ն. Յոկլը՝ բերելով «այդպիսի քմայնացման նոր օրինակներ»¹²: Չնայած որ Հ. Պեդերսընի տեսությունը քննադատեցին շատերը (Է. Հերման, Հ. Հիրտ, Յ. Մյսերյեն, Է. Շվիցեր, Ֆ. Շպեյտս և ուրիշներ)¹³, բայցև-այնպես, 20-րդ դարի երկրորդ կեսին այն ունեցավ նաև հետևորդներ (Թ. Բարոու, Վ. Պիզանի, Ի. Մ. Տրոնսկի, Թ. Գամկրելիձե, Վյաչ. Իվանով, Մ. Մայրիոֆեր, Է. Էվանջելիստի, Լ. Գերցենբերգ), որոնք ավելի հեռուն գնացին՝ հ.-ե. քմայնացած հետնալեզվայինների անդրադարձներ ցույց տալով ոչ միայն ալբաներենում, այլև հայերենում, լուվիերենում, թոխարական, հնդիրանական և բալթոսլավոնական լեզուներում: Այսինքն՝ *սայրում* խմբի լեզուներից բացի, նաև *կենսություն* խմբի այնպիսի լեզուներում, որոնք ներկայացված են արևելյան բարբառախմբի (= *սայրում*) տարածքում (հմնտ. լուվիերեն, թոխարականներ): Այս շրջափուլի առանձնահատկությունն այն էր, որ հետնալեզվայինների երեք հնչույթային կարգերի տեսության կողմնակիցները համեմատաբանական փաստարկներին ավելացրին նաև տիպաբանականները:

1.1. Հ.-ե. հետնալեզվայինների երկու հնչույթային կարգերի վարկածը

Իհարկե, այդ նույն ընթացքում հետնալեզվայինների երկու հնչույթային կարգերի վարկածը ևս ունեցել է իր պաշտպանները՝ ի դեմս Ե. Կուրիլովիչի և

9 Տե՛ս Թրոնսկի Ի. Մ., նշվ. աշխ., էջ 25:

10 Барроу Т., указ. соч., с. 72. Հմնտ. նաև: Иванов В. В., Проблема языков centum и satem, «Вопросы языкознания», 1958, N 4, էջ 13-15:

11 Տե՛ս Пизани В., նշվ. աշխ., էջ 138, Георгиев В. И., նշվ. աշխ., էջ 29, Թրոնսկի Ի. Մ., նշվ. աշխ., էջ 34:

12 Տե՛ս Пизани В., նշվ. աշխ., էջ 138:

13 Տե՛ս Георгиев В. И., նշվ. աշխ., էջ 29:

Վ. Գեորգիևի¹⁴: Այդ հայեցակարգին են հարել նաև Ա. Սավչենկոն և Կ. Շիլձը¹⁵: Ընդհանուր հնդեվրոպականում հնարավոր համարելով հետնալեզվայինների միայն երկու հնչույթային կարգերի վերականգնումը՝ Ե. Կուրիլովիչը և Վ. Գեորգիևը տարբեր պատկերացումներ ունեին, սակայն, նախասկզբնական (իմա՝ նախահնդեվրոպական) հետնալեզվայինների տիպերի և *սայրը* ու *կենարու* լեզուներում դրանց առաջացման պատճառների հարցում: Եթե ըստ Կուրիլովիչի՝ հ.-ե. նախալեզուն ունեցել է հետնաքմայինների և քմայինների կարգերը, իսկ շրթնահետնաքմայինները *կենարու* լեզուների նորակազմությունն էին, ապա Վ. Գեորգիևի կարծիքով՝ նախասկզբնական էին հետնաքմայինների և շրթնահետնաքմայինների հնչույթային կարգերը, իսկ քմայնացածները *սայրը* լեզուների նորակազմությունն էին¹⁶: Համապատասխանաբար, ըստ Գեորգիևի, «շփականները (սուլաշչականները) և հպաշփականները հնդեվրոպական մի քանի լեզուներում զարգացել են հետնաքմայիններից՝ քմայնացման և ապասուլաշչականացման օրենքով»¹⁷:

Վ. Գեորգիևի տեսությունը խոցելի է համարվել այն բանի համար, որ՝ 1) այն «կապված է զգալի և հազիվ թե հաղթահարելի դժվարությունների հետ», 2) կառուցված է բացառապես հնչյունաբանական գործընթացների հաշվառումով. նրանում շատ մեծ տեղ է տրվում համաբանական համահարթեցմանը, և «բացակայում են հնչույթաբանական հիմնավորումները»¹⁸: Իսկ Ե. Կուրիլովիչի տեսությունը քննադատվել է նրա հեղինակի՝ «մտահայեցողական դատողություններով սահմանափակվելու» համար¹⁹, և որ այդ տեսությունն «ընդհանրապես հիմնված չէ որոշակի փաստերի ուսումնասիրության վրա, այլ կառուցված է հնչույթաբանական բնույթի դատողությունների վրա»²⁰:

2. Հետնալեզվայինների հնչույթային կարգ(եր)ը ընդհանուր հնդեվրոպականում

Ինչպես երևում է նաև հիմնահարցի այս համառոտ տեսությունից, նախահնդեվրոպական հետնալեզվայինների հնչույթային կարգերի և հ.-ե. հին լեզուներում դրանց անդրադարձների (= ռեֆլեքսների) հարցը եղել և այսօր էլ մնում է հնդեվրոպաբանության բարդ խնդիրներից մեկը: Այդ

14 Տե՛ս նույն տեղում, էջ 28-57: Ե. Կուրիլովիչի հայացքների մասին տե՛ս **Пизани В.**, նշվ. աշխ., էջ 139, **Тронский И. М.**, նշվ. աշխ., էջ 28-30, **Савченко А. Н.**, նշվ. աշխ., էջ 64-66 (հմմտ. **Kurylowicz J.**, *Études indoeuropéennes*, I, Kraków, 1935, էջ 1-26, **Kurylowicz J.**, *L'apophonie en indo-européen*, Wrocław, 1956, էջ 356-375):

15 Տե՛ս **Савченко А. Н.**, նշվ. աշխ., էջ 64-66, **Майрхофер М.**, նշվ. աշխ., էջ 132:

16 Վյաչ. Իվանովը, լինելով ընդհանուր հնդեվրոպականում հետնալեզվայինների երեք հնչույթային կարգ տարբերակող հնդեվրոպաբաններից, պաշտպանել է Ե. Կուրիլովիչի տեսակետը շրթնահետնաքմայինների ավելի ուշ առաջացած լինելու մասին (տե՛ս **Иванов В. В.**, նշվ. աշխ., էջ 21-22):

17 **Георгиев В. И.**, указ. соч., с. 36-41.

18 Տե՛ս **Тронский И. М.**, նշվ. աշխ., էջ 31-33:

19 Տե՛ս նույն տեղում, էջ 29:

20 **Савченко А. Н.**, указ. соч., с. 64-66.

հիմնախնդրի հանգուցալուծումը դժվարություններ է հարուցում ոչ միայն այն պատճառով, որ հ.-ե. լեզուներում առկա փաստերը միանշանակ եզրահանգումների հիմքեր չեն տալիս, այլև այն պատճառով, որ ընդհանուր հնդեվրոպական լեզվի հնչույթային, մասնավորապես՝ բաղաձայններով հարուստ համակարգը՝ իր երիտքերականական մեկնությամբ, որը մասնակի վերանայումներով համեմատական քերականություններում գործառու է մինչև օրս, ոչ լիովին է համադրվում հ.-ե. հին լեզուների փաստերի հետ: Այս առումով կարևոր է նկատի առնել, որ երիտքերականների ժամանակներում դեռևս մշակված չէր հնչույթի տեսությունը: Չնայած որ «հնչյուն» տերմինով հիմնականում հասկանում էին հնչույթ՝ երևույթի պարզ՝ դասագրքային ըմբռնումով, բայցևայնպես, «հնչյուն» տերմինով նշանակվող միավորը միայն մասնակիորեն էր ծածկում այն հասկացական դաշտը, որն այժմ նկատի է առնվում «հնչույթ-հնչյուն / (ենթահնչույթ, այլահնչակ)» հարաբերակցությամբ: Չնայած որ երիտքերականների գործունեության վերջին շրջանում արդեն իսկ կային հնչույթաբանական առաջին պատկերացումները (Բոդուեն դը Կուրտենե, Ֆ. դը Սոսյուր)²¹, սակայն նախ՝ համեմատաբաններն ընդհանուր առմամբ կարևորություն չէին տալիս *հնչույթի* և *հնչյունի* տարբերակմանը՝ որպես լեզվի հնչաբանական մակարդակի երկու տարբեր կարգերի միավորների, երկրորդ՝ եթե նույնիսկ գործածում էին «հնչույթ» տերմինը, ապա այն ավելի շուտ «հնչյուն» տերմինի պարզ՝ մեխանիկական փոխարինում էր, քան թե բովանդակային, և հեռու էր հնչույթի իրապես լեզվաբանական, այն է՝ որպես գործառական միավորի ընկալումից (Ա. Մեյե, Ժ. Վանդրիես և ուրիշներ)²²: Մասնավորապես, այդ շրջանի համեմատաբանական աշխատություններում նկատի չէին առնվում հնչույթի և նրա կիրառական տարբերակների փոխհարաբերության հարցերը հին լեզուներում, որովհետև նշված լեզուները, ըստ էության, հնչույթաբանական տեսանկյունից դեռևս ուսումնասիրված էլ չէին: Ընդհանուր հնդեվրոպականում տարբերակելով հետնալեզվայինների երկու կամ երեք կարգ՝ *սապրում* լեզուներում հպաշփականների (նաև շփականների) առաջացումը համարում էին հ.-ե. քմայինների (*G^[h], *K^[h]) սուլաշականագման արդյունք՝ երկու փուլով՝ սուլականագման (առաջին քմայնացում) և շականագման (երկրորդ քմայնացում)²³: Սակայն շատ կարևոր է, որ նախքան հ.-ե. քմայինների՝ *սապրում* լեզուներում, ինչպես նաև շրթնահետնաքմայինների՝ *կենսրում* լեզուներում ունեցած արտացոլումների խնդրին անդ-

21 Տե՛ս II. A. Бодуэн де Куртене, Избранные труды по общему языкознанию, т. I, М., 1963, էջ 57-61, т. II, էջ 329, Фердинанд де Соссюр, Курс общей лингвистики, Фердинанд де Соссюр, Труды по языкознанию, М., 1977, էջ 70-71, 75-77: Հմմտ. նաև՝ Պետրոսյան Վ. Ջ., Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Եր., 2015, էջ 60-82:

22 Հմմտ., օր., Meillet A., Linguistique historique et linguistique générale, Paris, 1921, Meйe A., Введение..., Вандриес Ж., Язык, М., 1937, էջ 31:

23 Այս առումով համեմատական լեզվաբանության մեջ առաջադրված տեսակետները բազմաթիվ են, երբեմն էլ՝ իրարամերժ, բայց դրանց ընտրությունը մեր խնդրից դուրս է: Այդ խնդրի համառոտ ամփոփումը տես Սизани В., նշվ. աշխ., էջ 137-140:

րադառնալը պարզենք, թե առհասարակ որքանով է հիմնավորված ընդհանուր հնդեվրոպականում հետնալեզվայինների երկու կամ երեք (այսինքն՝ հետնաքմայիններից բացի, նաև քմայինների՝ *G^[h], *K^[h], և շրթնահետնաքմայինների՝ *G^{u[h]}, *K^{u[h]}) հնչույթային կարգեր տարբերակելը:

2.1. Ընդհանուր հնդեվրոպական ուներ հետնալեզվայինների մեկ հնչույթային կարգ

Մեր կարծիքով՝ հ.-ե. հետնալեզվայինների հնչույթային կարգ(եր)ի տարբերակման հարցում առավել ընդունելի է Յ. Սաֆարևիչի և Յու. Վ. Օտկուպշչիկովի տեսակետը, որի համաձայն՝ ընդհանուր հնդեվրոպական լեզվում եղել է հետնալեզվայինների միայն մեկ՝ հետնաքմայինների հնչույթային կարգ²⁴: Այդ առումով Յ. Սաֆարևիչի տեսակետը հատկապես կարևոր է, որովհետև նա Յու. Օտկուպշչիկովին կանխել է ավելի քան 40 տարով: Ըստ Յ. Սաֆարևիչի՝ հետնաքմայիններն ունեցել են երկու դիրքային տարբերակ՝ քմայիններ (g', k'), որոնք հանդես են եկել e-ին և i-ին նախորդող դիրքերում, և հետնաքմայիններ (g, k), որոնք հանդիպել են a, o և u ձայնավորներին նախորդող դիրքերում: Հ.-ե. առաջին շվային (*ə) և վանկարար ձայնորդներին նախորդող դիրքերում կարող էին հանդիպել երկու տարբերակներն էլ: «Որովհետև հնդեվրոպական լեզվում i-ի չքմայնացած հակադրությունը եղել է u-ն, ապա k', g'-ի հակադրությունն էլ e, i-ից առաջ՝ հետնալեզվային բաղաձայններին նախորդող դիրքում, դարձել են k^u, g^u-ն»²⁵: Ըստ Յ. Սաֆարևիչի՝ «Այդպես զարգացել է ka, ga: k'a, g'a; ko, go: k'o, g'o; ku, gu: k'u, g'u, բայց՝ k'i, g'i : k^ui, g^ui; k'e, g'e : k^ue, g^ue համակարգը: Centum խմբի լեզուներն ընդհանրացրել են առաջին հակադրությունը, satəm խմբի լեզուները՝ երկրորդը»²⁶: Վ. Պիզանիի կարծիքով՝ Յ. Սաֆարևիչի վարկածը խոցելի է «պարզունակ» լեզուների տեսանկյունից, որոնց «հնչունների և ձևերի բարդությունը նկատի առնելով՝ ավելի շուտ կարելի է ենթադրել, որ հետնալեզվայինների նախասկզբնական երեք շարքերը ծագում են հնչունների էլ ավելի մեծաթիվ կարգերից»²⁷: Չնայած որ մի շարք այլ հարցերում (և էական հարցերում) Վ. Պիզանին շեղվել է երիտքերականական պատ-

24 Տե՛ս **Пизани В.**, նշվ. աշխ., էջ 139, **Откупщиков Ю. В.**, Ряды индоевропейских гуттуральных, «Актуальные вопросы сравнительного языкознания», Л., 1989, էջ 67: Վ. Կրասուլսինը այդպիսի տեսակետ է վերագրել նաև Օ. Սեմերենյին վկայակոչելով նրա «Համեմատական լեզվաբանության ներածությունը» (տե՛ս **Красухин К. Г.**, Введение в индоевропейское языкознание, М., 2004, էջ 52), սակայն նշված աշխատության մեջ վերջինս հստակորեն զարգացրել է հ.-ե. հետնալեզվայինների երեք հնչույթային կարգերի դրույթը: Թերևս Օ. Սեմերենյին կարելի է վերագրել միտք այն մասին, որ նա հետնալեզվայինների մեկ հնչույթային կարգի վերականգնումը հնարավոր է համարել նախալեզվի հեռավոր վերականգնման դեպքում, այսինքն՝ նախահնդեվրոպականի վաղ փուլում (տե՛ս **Семереньи О.**, նշվ. աշխ., էջ 80-81):

25 **Пизани В.**, указ. соч., с. 139. Յ. Սաֆարևիչի սույն աշխատանքը հրատարակվել է լեիերենով:

26 Նույն տեղում:

27 Նույն տեղում:

կերացումներից, այս դեպքում, սակայն, նրա մոտեցումը խորքում երիտքերականական է:

Յ. Սաֆարևիչի սույն տեսակետը ձևավորվել է մի ժամանակաշրջանում, երբ մեկը մյուսի ետևից առաջարկվում էին ինչպես համաժամանակյա (բաշխական, գործառական են), այնպես էլ տարաժամանակյա (զուգամետատարամետային, պատմական են) հնչոյթաբանական տեսությունները, որոնցում արդեն իսկ ուրվագծվում էր հնչոյթի հասկացությունն արդի ըմբռնումով²⁸: Ըստ ամենայնի, նրա վարկածը մշակվել է հնչոյթի հասկացության նոր պատկերացումների հաշվառումով: Ի վերջո, 1939 թ. լույս տեսավ Ն. Տրուբեցկոյի «Հնչոյթաբանության հիմունքները»՝ գործառական հնչոյթաբանության առ այսօր չգերազանցված տեսական ուսումնասիրությունը և ընդհանրապես էլ հնչոյթաբանական մեծարժեք աշխատություններից մեկը:

2.2. Բազմահնչոյթայնությունը լեզվի պարզունակության չափանիշ է

Վ. Պիզանիի կարծիքը, ըստ որի՝ առավել հավանական է նախասկզբնական լեզուներում հնչյունների ավելի մեծաթիվ կարգերի գոյությունը, միանշանակ չէ: Եթե խոսքը «հնչյունների» մասին է՝ որպես խոսքային միավորների, հնարավոր է, իսկ եթե այդ տերմինով նա նկատի ունի «լեզվական հնչյունը», այսինքն՝ *հնչոյթը*, ապա վիճելի է: Օր.՝ պոլինեզյան *հավայերեն* լեզվում տարբերակվում է 13 հնչոյթ (5 ձայնավոր, 8 բաղաձայն)²⁹: Նույնքան հնչոյթ ունի ավստրալիական *արանյրա* լեզուն (3 ձայնավոր, 10 բաղաձայն)³⁰, իսկ ամերիկահնդկացիական *պիրեիսայի* լեզվում հնչոյթների թիվը 10 է (3 ձայնավոր, 7 բաղաձայն)³¹: Նախ՝ միանշանակ չէ «պարզունակ լեզու» ձևակերպումը, բայցնայնպես, եթե այն գործածենք իր առօրեական, այլ ոչ թե գիտական ըմբռնումով, ապա թե՛ հավայերենը և թե՛ պիրեիսային կարող են համարվել այդպիսի լեզուների բնութագրական օրինակներ: Մյուս կողմից՝ հայտնի չէ վիճակագրություն այն մասին, որ

28 Տե՛ս «Основные направления структурализма», М., 1964, էջ 58-91, 211-238, **Реформатский А. А.**, Из истории отечественной фонологии, М., 1970, էջ 94-113, **Поливанов Е. Д.**, Факторы фонетической эволюции языка как трудового процесса, **Поливанов Е. Д.**, Статьи по общему языкознанию, М., 1968, էջ 57-74, **Նույնի՝** Где лежат причины языковой эволюции?, **Поливанов Е. Д.**, Статьи по общему языкознанию, էջ 75-89, **Նույնի՝** Мутационные изменения в звуковой истории языка, **Поливанов Е. Д.**, Статьи по общему языкознанию, էջ 90-113, **Նույնի՝** Закон перехода количества в качество в процессах историко-фонетической эволюции, **Поливанов Е. Д.**, Статьи по общему языкознанию, էջ 114-134, **Якобсон Р.**, Принципы исторической фонологии, **Якобсон Р.**, Избранные работы, М., 1985, էջ 116-132, **Պետրոսյան Վ.**, Ռ. Յակոբսոնը պատմական հնչոյթաբանության հիմնադիր, «Լեզու և լեզվաբանություն», 2016, N 2, էջ 16-22, **Պետրոսյան Վ.**, Ե. Դ. Պոլիվանովի զուգամետատարամետային հնչոյթաբանական հայեցակարգը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2018, N 2, էջ 251-259:

29 Տե՛ս «Лингвистический энциклопедический словарь» (այսուհետև՝ ЛЭС), М., 1990, էջ 91:

30 Տե՛ս **Кодухов В. И.**, Введение в языкознание, М., 1979, էջ 150:

31 Տե՛ս **Джаукян Г. Б.**, Универсальная теория языка, М., 1999, էջ 273:

հնչույթների մեծ թիվը բնորոշ է հատկապես «պարզունակ» լեզուներին: Ասվածի վկայություններն են հենց նշված երկու լեզուները: Հնչույթներով հարուստ են հատկապես իբերակովկասյան լեզվաընտանիքի *արխազ-ադ-դեյսկան* ճյուղի լեզուները: Մասնավորապես գրական արխազերենն ունի 68 հնչույթ (2 ձայնավոր՝ *a, ɛ*, 8 երկբարբառ և 58 բաղաձայն)³², իսկ ուրի-խերենը՝ 82 հնչույթ (2 ձայնավոր, 80 բաղաձայն)³³: Տունգուս-մանջուրական ընտանիքին պատկանող *ուդեգերեն* (ուդեյերեն) լեզուն ունի 35 հնչույթ (8 ձայնավոր, 27 բաղաձայն), իսկ, օր., *էվենկերենը*՝ 29 հնչույթ (11 ձայնավոր, 18 բաղաձայն)³⁴: Ինչպես նշեցինք, «պարզունակ լեզու» ձևակերպումը վերապահությամբ ընդունելու դեպքում հավայերենը, արանտան, պիրեյսային և ուրիխերենը մի շարք ընդհանուր հատկանիշներով կդասվեն այդ կարգի մեջ: Այսինքն՝ մի կողմից՝ ամենից քիչ հնչույթներ ունեցող, իսկ մյուս կողմից՝ ամենից շատ հնչույթներ ունեցող լեզուները: Ակնհայտ է, որ այդ երկու ծայրահեղ դրսևորումները չեն կարող տեղավորվել Վ. Պիզանիի սահմանած չափորոշիչի մեջ: Մյուս կողմից՝ ի՞նչ չափանիշով որոշենք 60 և ավելի հնչույթ ունեցող արխազերենի, 35 հնչույթ ունեցող ուդեգերենի և 29 հնչույթ ունեցող էվենկերենի (վերջին երկուսի հնչույթների թիվը մոտ է աշխարհի լեզուների հնչույթների թվաբանական միջինին) և առհասարակ՝ հնչույթների մոտավորապես նույն համամասնությունն ունեցող լեզուների՝ «պարզունակների» կարգին դասվելու կամ չդասվելու հարցը: Կարծում ենք՝ ավելի ճիշտ կլինի վիճակագրության հիմք ընդունել ոչ թե լեզուների՝ հին թե նոր, «պարզունակությունը», որը, ինչպես ասացինք, վիճելի չափանիշ է, այլ գրավոր հուշարձաններով հայտնի հին լեզուները, որոնց հնչույթային համակարգերի մասին պատկերացումները նույնպես բավականին արժանահավատ են: Ըստ այդմ, օր., հնդեվրոպական հին լեզուների մեծամասնության հնչույթային համակարգերը մեծաթիվ չեն՝ 25-30 հնչույթի շրջակայքում, եթե նկատի ունենանք միայն պարզ հնչույթները (հին հունարեն, լատիներեն, գոթերեն, հին պարսկերեն, խեթերեն, լուվիերեն, փյոյուգերեն ևն): Իհարկե, երկբարբառներն ու եռարբարբառները նույնպես հաշվի առնելու դեպքում որոշ լեզուներում (հին հնդկերեն, հին սլավոներեն, լիտվերեն, հին անգլերեն) այդ թիվը զգալիորեն կաճի՝ տատանվելով 40-70-ի սահմաններում³⁵: Սակայն ո-

32 Տե՛ս Լомтатидзе К. В., Абхазский язык, «Языки народов СССР», т. IV, М., 1967, էջ 103-108: *Քզիբսկյան* բարբառն ունի 65 բաղաձայն հնչույթ (տե՛ս ԼԵՇ, էջ 10): Վ. Կողոխովը արխազերենի համար նշում է 60 հնչույթ, հավանաբար՝ առանց երկբարբառների (տե՛ս Կодухов В. И., նշվ. աշխ., էջ 150):

33 Ուրիխերենն ունի հնչույթների ամենից մեծ թիվը: Չայնավորներն են՝ *a* և *ə*, որոնք, սակայն, ունեն իրենց դիրքային՝ հնչյունական տարբերակները (տե՛ս Կумахов М. А., Убыхский язык, «Языки народов СССР», т. IV, էջ 692-694): Խոսվում է Թուրքիայի մի քանի գյուղերում: Խոսողների թիվը մի քանի տասնյակ է (տե՛ս ԼԵՇ, էջ 529):

34 Տե՛ս Суник О. П., Удгейский язык, «Языки народов СССР», т. V, Л., 1968, էջ 211-214, Константинова О. А., Эвенкийский язык, «Языки народов СССР», т. V, էջ 69-72:

35 Տե՛ս Բарроу Т., նշվ. աշխ., էջ 66-112, Иванов В. В., Топоров В. Н., Санскрит, М., 1960, էջ 51-65, Зализняк А. А., Грамматический очерк санскрита, Кочергина В. А., Санскритско-русский словарь, М., 1978, էջ 788-798, Вайан А.,

րևէ լեզվի հնչույթային կազմի մասին խոսելիս ճիշտ է նկատի ունենալ միայն պարզ հնչույթները, որովհետև երկբարբառներն ու եռաբարբառները (ի դեպ, վերջինները հ.-ե. լեզուներից բնորոշ էին միայն հայերենին), վերջին հաշվով, լեզվում առկա պարզ հնչույթների հնչյունական համադրություններ են մեկ վանկում (հմմտ. *սևան*, որտեղ *եա*=ե+ա, *հրեայք՝ եայ*=ե+ա+յ են): Միայն պարզ հնչույթների թվով հին հայերենի հնչույթային համակարգը միջին վիճակ ուներ (36)³⁶, հետևաբար հին հայերենն էլ հնչույթների միջին կազմ ունեցող հ.-ե. լեզուներից էր: Ոչ հնդեվրոպական լեզուներից հնչույթների զգալիորեն մեծ կազմ ուներ, օր., եբրայերենը (սեւական լեզվաընտանիք)³⁷, բայց այն նույնպես ոչ մի չափանիշով չի կարող «պարզունակների» կարգին դասվել:

Առավել հավանական է հին և նոր լեզուների միջև հնչույթների քանակական տեղաշարժի դինամիկան պարզել միևնույն լեզվի հին և նոր վիճակների (օր.՝ հին հայերեն > արդի հայերեն, հին անգլերեն > արդի անգլերեն, հին սլավոներեն (> հին ռուսերեն) > արդի ռուսերեն ևն) միջև վիճակագրական քննությամբ: Ինչպես հին հայերենի, այնպես էլ հին սլավոներենի և առհասարակ *սայրը* խմբի հ.-ե. լեզուների դեպքում ակնհայտ է, որ դրանց վաղ՝ նախագրային փուլերի համեմատությամբ գրանցվել է հնչույթային կազմի աճ՝ առնվազն հպաշփականների առաջացման չափով, որը փոքր թիվ չէ հատկապես հին հայերենի և հին հնդկերենի դեպքում: Իսկ, օրինակ, հայերենում գրային փուլի տվյալների համեմատությունը պարզ հնչույթների թվի էական տեղաշարժ չի արձանագրել. աշխարհաբարյան հայերենում վերացել է հին հայերենի *ե* (e)-ի և *է* (ē)-ի քանակական (հետևաբար՝ նաև հնչույթաբանական) տարբերությունը, *ւ* (u)-ը դուրս է եկել գործածությունից, իսկ փոխարենը հնչույթային համակարգում ավելացել է *ֆ* (f)-ն՝ լրացնելով ձայնեղ վ (v)-ի համապատասխան խուլի բաց վանդակը, որ առկա էր հին հայերենում: Բարդ հնչույթները, այն է՝ երկբարբառներն ու եռաբարբառները, որպես այդպիսին, դուրս են եկել գործածությունից, ավելի ճիշտ՝ պարզեցվել են՝ վերածվելով երկհնչյունի (հմմտ. *ես* > *յս*, *իւ* > *յու*, *եսս* > *յո* ևն) կամ արդեն իսկ եղած ձայնավորներից մեկին (հմմտ. *սս* > [o]): Հետևաբար հայերենում հնչույթային կազմի կրճատում կարող ենք արձանագրել, եթե

Руководство по старославянскому языку, М., 1952, էջ 32-92, **Горшков А. И.**, Старославянский язык, М., 1974, էջ 89-98, **Хамбурграев Г. А.**, Старославянский язык, М., 1974, էջ 87-107, **Петерсон М. Н.**, Очерк литовского языка, М., 1955, էջ 15-17, **Смирницкий А. И.**, Древнеанглийский язык, М., 1955, էջ 70-108:
 36 Երկբարբառների ու եռաբարբառների հետ միասին այդ թիվը 50-ի սահմաններում էր: Եթե հին հայերենի պարզ հնչույթների քանակի առնչությամբ հայերենագիտության մեջ էական տարածայնություններ չկան, ապա երկբարբառ/(երկբարբառակերպ) և եռաբարբառ/(եռաբարբառակերպ) հնչույթների առումով պատկերը միանշանակ չէ (տե՛ս **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի (այսուհետև՝ ԼԷԼ), հատ. 6, Եր., 1971, էջ 151, էջ 223-229, **Սույնի՝** Հայոց գրերը, Եր., 1984, էջ 580-593, **Աղայան Է. Բ.**, Գրաբարի քերականություն, գ. 1, Եր., 1964, էջ 102-140, **Աբրահամյան Ա. Ա.**, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 5-6, **Պետրոսյան Վ. Ջ.**, Հին հայերենի եռաբարբառային կազմությունները (համաժամանակյա հայեցակետ), «Հայագիտության հարցեր», 2017, N 1 (10), էջ 128-136, **Սույնի՝** Հին հայերենի երկբարբառային կազմությունների հնչույթաբանական և ննչունաբանական արժեքները, «Հայկագեան հայագիտական հանդես», 2018, էջ 57-78):
 37 Տե՛ս **Ламблин Т. О.**, Учебник древнееврейского языка, М., 1998, էջ 24-32:

նկատի ունենանք նաև բարդ հնչույթները: Հնչույթային կազմը կրճատվել է նաև հին անգլերենից (7–11–րդ դդ.) նորին անցման փուլում. հին անգլերենի շուրջ 73 հնչույթի (ներառյալ 11 երկբարբառ)³⁸ դիմաց ժամանակակից անգլերենում հաշվում են 40 հնչույթ, որից 3–ը՝ երկբարբառ³⁹: Գոթերենում, որը հին անգլերենի ժամանակակիցն է և հայտնի է 5–6–րդ դդ. ձեռագիր հուշարձաններով, տարբերակվում են շուրջ 30 պարզ հնչույթ, որից 10–ը՝ ձայնավոր, և 2–3 երկբարբառ⁴⁰: Շուրջ երկուսուկես հազարամյակի ընթացքում՝ մ.թ.ա. 8–7–րդ դարերից, երբ սկիզբ է առնում հունական հնչունական գիրը, մինչև մ.թ. 17–18–րդ դդ. (այդ ընթացքում լեզուն անցնում է որակական զարգացման 3 փուլ), հունարենի հնչույթային համակարգում արձանագրված քանակական տեղաշարժերը մեծ հաշվով չեն փոխում պատկերը: Հին հունարենն ուներ 5 ձայնավոր (a, u, i, e, o), 17 բաղաձայն⁴¹ և 9 «բուն» երկբարբառ: Հնչույթային առումով հին հունարենում առկա էր, ըստ էության, 10 ձայնավոր, որովհետև նրա ձայնավորներն ունեին երկար և կարճ տարբերակներ՝ որպես ինքնուրույն հնչույթներ: Այսինքն՝ նաև α, υ, ι, η, ω: Հետևաբար հին հունարենն ուներ 27 պարզ և առնվազն 9 բարդ հնչույթ (երկբարբառ), եթե նկատի չունենանք, այսպես կոչված, «ոչ բուն» երկբարբառները: Բոլորը միասին՝ մոտ 40: Նոր հունարենում վերացել է ձայնավորների քանակական տարբերությունը, այսինքն՝ մնացել է 5–ը, ավելացել է 3 բաղաձայն՝ շրթնատամնային [ɸ], ատամնային ձայնեղ [ð] և խուլ [θ]⁴²: Ասվածից հետևում է, որ հին հունարենի 27 պարզ հնչույթի փոխարեն նոր հունարենն ունի 25–ը: Հետևաբար հունարենի գրավոր զարգացման մոտ 2800 տարվա ընթացքում հնչույթային կազմի քանակական տեղաշարժ գրեթե չի գրանցվել:

Լեզուների ցանկն ընդարձակելու դեպքում ևս վերը նշված պատկերն ընդհանուր առմամբ չի փոխվի, եթե նույնիսկ դուրս գանք հնդեվրոպական լեզվաընտանիքի սահմաններից: Հետևաբար հիմքեր չկան պնդելու, թե ժամանակակից լեզուների համեմատությամբ հին կամ նախա-

38 Стн Смирницкий А. И., Древнеанглийский язык, М., 1955, էջ 70-105: Հին անգլերենի հնչույթային կազմին պիտի վերաբերվել որոշ պայմանականությամբ, որովհետև նշված գրականության մեջ խոսվում է «հնչյունների» մասին, և պարզ չէ, թե տարբերակվող «հնչյունները» որքանով են արտացոլում այդ լեզվի հնչույթները, եթե դրանց նկատմամբ կիրառվեն գործառական հնչույթաբանության սկզբունքները: Նկատի ունենք, մասնավորապես, р և pp, g' և g'g' տիպի տարբերակումները, որոնցից երկգիրները մեկ տառով նշանակվողներից տարբեր հնչյունների նշաններ են, բայց արդյո՞ք նաև տարբեր հնչույթների:

39 Стн Реформатский А. А., Введение в языковедение, М., 1967, էջ 220:

40 Стн Гухман М. М., Готский язык, М., 1958, էջ 49-62: Գոթերենում միանշանակ չէ երկբարբառային գրություն ունեցողների հնչունական արժեքի հարցը (տե՛ս նույն տեղում):

41 Հին հունարենի այբուբենում առկա է 24 տառ, որովհետև ο և е ձայնավորների կարճ ու երկար տարբերակների համար կան առանձին գրանշաններ, համապատասխանաբար ο և ω, ε և η, ի տարբերություն մյուս ձայնավորների, որոնց քանակական տարբերությունը գրությամբ արտահայտվում է տարբերակիչ նշանով (հմմտ. α, ι, υ):

42 Իսկ կրիտո-միքենյան վանկային գիրը հայտնի է մ.թ.ա. 14-9-րդ դդ. В գծային գրով (տե՛ս Գеоргиев В. И., նշվ. աշխ., էջ 58, Нерознак В. П., Греческий язык, ЛЭС, էջ 118-119, Соболевский С. И., Древнегреческий язык, М., 1940, էջ 7-8):

սկզբնական լեզուներին բնորոշ էր հնչույթների մեծ կազմը, ինչպես որ պնդել է Վ. Պիզանին:

2.3. Քաֆիրյան լեզուները և հ.-ե. հետնալեզվայինների երեք շարքերի հարցադրումը

Չնայած որ կառուցվածքային լեզվաբանության, մասնավորապես՝ կառուցվածքային հնչույթաբանության գաղափարները 20-րդ դարի կեսերից թափանցում էին նաև համեմատական լեզվաբանության ոլորտ, բայց դա չէր խանգարում, որ արմատավորված հայեցակարգային մոտեցումները շարունակեին գործառել նոր սերնդի համեմատաբաններից շատերի ուսումնասիրություններում: Նկատի ունենք հատկապես այն հնդեվրոպաբաններին, որոնք նախալեզվի հպական բաղաձայնների տարբերակման հարցում շարունակեցին հիմնականում առաջնորդվել երիտքերականական հայեցակարգով (Օ. Սեմերենյի, Թ. Բարոու, Վ. Պիզանի, Հ. Կրայե, Գ. Ջահուկյան, Ի. Տրոնսկի): Իհարկե, նման վարքագիծը պարզապես պահպանողականության դրսևորում չէր: Ընդհանուր հնդեվրոպական լեզվի՝ երիտքերականների կողմից մշակված բավականին կուռ հնչույթային համակարգից նույնիսկ մասնակիորեն հրաժարվելու փորձերը, որոնք նույնպես տեղի էին ունենում (հմնտ. հ.-ե. պարզ շրթնային ձայնեղ հպականից (*b), հ.-ե. շնչեղ խուլերի հնչույթային կարգից հրաժարվելու կամ ցեղակից լեզուների միայն մի խմբի համար այդպիսին վերականգնելու հարցադրումները)⁴³, ոչ հազվադեպ նոր և ավելի բարդ խնդիրների հանգուցալուծման անհրաժեշտության առջև էին կանգնեցնում համեմատաբաններին: Ընդհուպ հնչում էին հ.-ե. նախաձևերը վերականգնելու ջանքերը անհեռանկարային դրակելու⁴⁴, ավելին՝ հ.-ե. լեզուների՝ մեկ ընդհանուր նախալեզվից առաջացած լինելու դրույթից հրաժարվելու⁴⁵, լեզվաընթացիկ հասկացությունը լեզվամիության հասկացությամբ փոխարինելու առաջարկություններ⁴⁶ և այլն:

43 Տե՛ս **Meïe A.**, Введение..., էջ 116-117, **Семереньи О.**, նշվ. աշխ., էջ 81-83, **Тронский И. М.**, նշվ. աշխ., էջ 40, **Барроу Т.**, նշվ. աշխ., էջ 70-71, **Джаукян Г. Б.**, Сравнительная грамматика армянского языка, Ер., 1982, էջ 22, **Майрхофер М.**, նշվ. աշխ., էջ 124, **Хонер П. Дж.**, Языки “decem” и “taihum”, НЗЛ, вып. XXI, М., 1980, էջ 174-175 և 180, **Красухин К. Г.**, նշվ. աշխ., էջ 56, **Гершенберг Л. Г.**, նշվ. աշխ., էջ 29-31:

44 Հմնտ. «Համեմատական քերականությունը հնդեվրոպական լեզուն վերստեղծելու նպատակ չի հետապնդում...» (**Meïe A.**, Введение..., с. 32): Կամ. «Միտքն այն մասին, որ գոյություն ունեցող լեզուների համեմատության միջոցով կարելի է վերականգնել սկզբնական լեզուն, պատրանք է» (**Вандриес Ж.**, указ. соч., с. 19):

45 Հմնտ. «Այն, ինչը մենք անվանում ենք «հնդեվրոպական լեզու», մի կողմից կարող էր գոյություն ունենալ միայն որպես մեկը մյուսից խիստ տարբեր տարածական բարբառների բազմություն, իսկ մյուս կողմից այդ տեսքով պիտի գոյություն ունենար շատ երկար ժամանակ, որի ընթացքում լեզվում տեղի են ունեցել էական փոփոխություններ, որոնք ընդգրկել են բարբառների մերթ մեկ, մերթ մյուս հատվածը» (**Пизани В.**, указ. соч., с. 165): Հմնտ. նաև **Պիզանի Վ.**, Հնդեվրոպական լեզուների ծագումը, «Պատմաբանասիրական հանդես», 1979, N 1 (84), էջ 204-212:

46 Տե՛ս **Трубецкой Н. С.**, Мысли об индоевропейской проблеме, **Трубецкой Н. С.**, Избранные труды по филологии, М., 1987, էջ 44-59: Այս աշխատանքում Ն. Տրուբեցկոյը առանձնացնում է կառուցվածքային 6 հատկանիշ, որոնց ամբողջությունը, նրա կարծիքով, բնութագրում է հ.-ե. լեզվական տիպը, սակայն է. Բենվենիստը ցույց է տվել, որ նույն 6 հատկանիշները բնորոշ են նաև ամերիկահնդկացիական տիպերին լեզվին (տե՛ս **Бенвенист Э.**, Классификация языков, «Новое в лингвистике», вып. III, М., 1963, էջ 48): Այսինքն՝ տիպաբանական հատկանիշների ամբողջությունը դեռևս չի կարող լեզուների միջև նաև ծագումնաբանական ընդհանրության վկայություն լինել:

Հետնալեզվայինների բոլո՞ր (երկու կամ երեք) տեսակներն են ընդհանուր հնդեվրոպականում ունեցել հնչույթային կարգավիճակ (ինչպես որ ընդհանուր առմամբ վերականգնվում է համեմատաբանական աշխատություններում), թե՞ դրանցից միայն մեկը՝ հետնաքմայինները, իսկ մյուսները եղել են հետնաքմայինների դիրքային տարբերակներ: Այս հարցադրումը կարևոր նշանակություն ունի հ.-ե. նախալեզվի բաղաձայնական համակարգի բնութագրի առումով, բայց նույն կարևորությունը չունի առանձին հնդեվրոպական լեզուների հպաշփականների տարածամասնակյա քննության տեսանկյունից: Հնչույթաբանական պլանում, ըստ էության, էական նշանակություն չունի, թե նախալեզվի հատկապես ո՞ր հնչունական (դիրքային) տարբերակից է սերվել դուստր լեզվի տվյալ հնչույթը՝ հետնաքմայինի՞ց, քմայինի՞ց, թե՞ շրթնահետնաքմայինից, որովհետև բոլոր դեպքերում էլ այն սերվել է միննույն հնչույթից⁴⁷: Հետևաբար հ.-ե. հետնալեզվայինների հնչաբանական բնութագրերի համակողմանի քննության հարցը, ինքնին կարևոր լինելով հանդերձ, մեզ հետաքրքրող խնդրի հանգուցալուծման տեսանկյունից առաջնային չէ, ուստի կբավարարվենք միայն որոշ դիտարկումներով: Ըստ այդմ.

1) Անկախ այն բանից՝ համեմատաբաններն ընդհանուր հնդեվրոպական լեզվում վերականգնում են հետնալեզվայինների մեկ, երկու, թե երեք շարք, հ.-ե. հին լեզուներում ընդհանուր առմամբ ցույց են տրվում ընդհանուր հնդեվրոպական հետնալեզվայինների միայն երկու շարքերի անդրադարձները՝ հետնաքմայինների և քմայինների՝ *սսսրըմ* լեզուներում, հետնաքմայինների ու շրթնահետնաքմայինների՝ *կենյում* լեզուներում: Իհարկե, եղել են *սսսրըմ* լեզուներում նաև շրթնահետնաքմայինների, իսկ *կենյում* լեզուներում՝ նաև քմայնացածների հետքեր ցույց տալու փորձեր⁴⁸: Հ. Պեդերսընը հին ալբաներենում փորձել է ցույց տալ նաև երրորդ շարքի անդրադարձը, սակայն նրա կարծիքը ոչ միանշանակ վերաբերմունքի տեղիք է տվել⁴⁹:

47 Տես Պետրոյան Վ. Զ., Հավական բաղաձայնների հնդեվրոպական համակարգը, «Կէն», 2019, N 2 (66), էջ 107-106:

48 Տես Семерень О., նշվ. աշխ., էջ 162-164, Герценберг Л. Г., նշվ. աշխ., էջ 33-39:

49 Տես Пизани В., նշվ. աշխ., էջ 138, Красухин К. Г., նշվ. աշխ., էջ 45-52: Հ. Պեդերսընի տեսակետը պաշտպանել են ալբանագետ Ս. Յոկլը և Վ. Պիզանին: Վերջինիս դիտարկմամբ՝ «հայերենում e-ից և i-ից առաջ քմայնանում են ոչ թե մաքուր հետնաքմայինները, այլ միայն հին շրթնահետնաքմայինները»: Այդ քմայնացման ժամանակ «վերջնային -e-ն (ոչ -i-ին) արդեն անհետացել էր», այդ պատճառով էլ *penkɥe-ն հայերենում դարձել է *հինգ*, բայց *okɥi-ն՝ *աչ*: Նույն երևույթի առկայությունը նաև թոխարական լեզուներում է. Էվանջելիստիին հինք է տվել խոսելու «հայկական-հունական-ալբանական-թոխարական զուգաբանության մասին» (տե՛ս *Эвангелисти* Զ., *Индоевропейские зубные согласные и тохарские палатализации*, «Тохарские языки», М., 1959, էջ 116, ծմբ. 1): Ուստի, ըստ Վ. Պիզանիի, «հայերենը, ալբաներենը և թոխարական լեզուները հաստատում են շրթնահետնաքմային բաղաձայնների առկայությունը հնդեվրոպական լեզվի բարբառների գոնե մի մասում» (Пизани В., указ. соч., с. 138-139): Ի տարբերություն Վ. Պիզանիի Թ. Գամկրելիձեն և Վյաչ. Իվանովը *penkɥe > *հինգ* տիպի անցումները բացատրում են հետնաքմայինին նախորդող ձայնորդի առկայությամբ, այլ ոչ թե նախքան այդ անցումը e-ի անկումով (տե՛ս *Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. В., Индоевропейский язык и индоевропейцы*, т. I, էջ 92):

2) Հ.-ե. հետնալեզվայինների հնագույն (արխաիկ) գծեր են պահպանվել հատկապես հնդարիական ճյուղի *քաֆիրյան* (արևմտադարդյան) լեզուներում: Ուսումնասիրողներն այդ երևույթի պատճառը համարել են ուրիշ լեզուներից դրանց տևական (= հազարամյակներով) մեկուսացածությունը (խոսվում են Աֆղանստանի լեռնային շրջաններում)⁵⁰: Այս լեզուներում հ.-ե. հետնալեզվայիններն ունեցել են հնդարիականներից տարբեր անդրադարձներ: Ի տարբերություն հին հնդկերենի, որտեղ հ.-ե. քմայնացած ոչ շնչեղ խուլ հպականը՝ *k-ն, վերածվել է առաջնալեզվային քմայնացած խուլ (միաֆոնուս) շփականի՝ ś, ապա քաֆիրյան վայգալի լեզվում այն վերածվել է առաջնալեզվային ոչ շնչեղ խուլ (միաֆոնուս) սուլական հպաշփականի (սիբիլյանտի)՝ c [cʰ] (հմմտ. հ.-ե. *kṣṍn «շուն» > հն հնդկ. ś(u)vā, բայց՝ վայգալի cū): Եթե հ.-ե. քմայնացած ոչ շնչեղ ձայնեղ հետնալեզվայինը՝ *g'-ն, հին հնդկերենում դառնում է ձայնեղ շչական (միաֆոնուս) հպաշփական՝ ṣ, ապա վայգալի լեզվում դառնում է առաջնալեզվային սուլական շփական՝ z (հմմտ. *g'onu (/ *g'enu) > հն հնդկ. ānu «ծունկ», վայգալի zāṃ): Նշված հատկանիշներով քաֆիրյան լեզուներն ավելի մոտ են հին իրանականներին, մասնավորապես՝ ավեստային, քան հնդկերենին: Քաֆիրյան խուլ հպաշփականի՝ c-ի կողքին ձայնեղ շփականի՝ z-ի առկայությունն արդեն բուն քաֆիրյան լեզուների պատմության ընթացքում ձայնեղ հպաշփականի փոփոխության արդյունք է, որը հաստատվում է այդ լեզուներում *g' > ṣ գուգահեռ անդրադարձով⁵¹: Քմայնացած հետնալեզվայինների անցումը առաջնալեզվային հպաշփականների և շփականների տեղի է ունեցել միջնալեզվային հպականների միջանկյալ աստիճանով: Նշված երևույթները հիմք են տվել ասելու, որ «հնդեվրոպական քմայնացածների ընդհանուր արիական արտացոլումները եղել են հպական հնչույթներ, որոնք շփականների և հպաշփականների են վերածվել արդեն առանձին արիական բարբառների պատմության ընթացքում»⁵²: Ասվածներից կարելի է եզրակացնել նաև, որ հետնալեզվային հպականներից հպաշփականների և շփականների առաջացումը, լայն առումով, գրեթե միաժամանակ սկսված գործընթաց է:

3) Ըստ Թ. Գամկրելիձեի և Վյաչ. Իվանովի՝ ընդհանուր հնդեվրոպականում հետնալեզվայինների երրորդ շարքի վերականգնումը հնարավոր է տարաժամանակյա տիպաբանության տվյալներով, եթե նույնիսկ որևէ լեզվում պահպանված չլինեին նրա անդրադարձները, բայց այն հավաստված է հնդիրանական յագգույամերեն լեզվում ««հետնալեզվայինների» երեք շարքերի երկրորդային համակարգով՝ ... k----- k'----- k^o // g-

50 Сгн Иванов Вяч. В., Проблема языков *centum* и *satem*, էջ 12-23, Эдельман Д. И., Дардские языки, «Языки Азии и Африки», т. II, М., 1978, էջ 254-255:

51 Сгн Иванов Вяч. В., Проблема языков *centum* и *satem*, էջ 14: Հմմտ. նաև՝ Барроу Т., նշվ. աշխ., էջ 72:

52 Иванов Вяч. В., Проблема языков *centum* и *satem*, с.15.

— g' — go»⁵³, և դարդյան (արիական) քաշմիրի լեզվում՝ հետնալեզվայինների եռաշարք հակադրությամբ⁵⁴:

3. Հպաշփականները որպես հ.-ե. հետնալեզվային հպականների քնայնացման արդյունք

Սաւրը խմբի հ.-ե. հին լեզուներում (հնդիրանականներ, ընդհանուր սլավոներեն, հին սլավոներեն, հայերեն, լիտվերեն, ալբաներեն) հպաշփականների ներկայացվածությունը անհամաչափ էր. հին հնդկերենում տարբերակվել են *c* [č'] (= հյ. չ), *ch* [č'h] (= հյ. չ^h), *j* [j] (= հյ. ջ) և *jh* [j'h] (= հյ. ջ^h), հին (աքեմենյան) ավեստայում, պահլավերենում և պարսկերենում՝ *č* [č'] (= հյ. չ) և *ṣ* [ṣ] (= հյ. ջ)⁵⁵, ընդհանուր սլավոներենում և հին սլավոներենում՝ *ч* [č'] (= հյ. չ), *щ* [ʃ'ɸ'ɹɔ] (= հյ. ճ'), և *ц* [c'] (= հյ. ջ)⁵⁶, իսկ լիտվերենում՝ *c* [c'] (= հյ. ջ) և *č* [č'] (= հյ. չ)⁵⁷ հպաշփականները: Հին ալբաներենում խոսվում է մեկ հպաշփականի մասին, որը, սակայն, այդ կարգավիճակում երկար չի պահպանվել⁵⁸: Չնայած որ հպաշփականների առկայությունը *սաւրը* խմբի լեզուների հիմնական տարբերակիչ գծերից է համարվում, սակայն այդպիսիք ուներ նաև *կենտրոն* խմբին դասվող հին հունարենը (հմմտ. *ζ* [dz], *ξ* [ks], *ψ* [ps])⁵⁹: Եթե նկատի ունենանք, որ հունական հնչյունական գիրը սկիզբ է առնում մ.թ.ա. 8–7–րդ դարերից (դասական հունարենի շրջան), ապա վստահորեն կարելի է ասել, որ հպաշփականները հին հունարենում (ավելի ձիշտ՝ հին հունական բարբառներում, որովհետև այդ շրջանում միասնական հունարենը դեռևս չէր ձևավորվել) պիտի կազմավորված լինեին առնվազն մ.թ.ա. 2–րդ հազարամյակի կեսերին: Ըստ ամենայնի, հայերենում նույնպես հպաշփա-

53 Ств Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. В., 624. աշխ., т. I, էջ 115-116:

54 Ств Эдельман Д. И., 624. աշխ., էջ 263:

55 Ств Барроу Т., 624. աշխ., էջ 66-111, Елизаренкова Т. Я., Грамматика ведийского языка, М., 1982, էջ 64-71, **Նոյնի** Санскрит, «Языки мира: Индоевропейские языки древнего и среднего периодов», М., 2004, էջ 31-36, **Зализняк А. А.**, 624. աշխ., էջ 788-798, **Расторгуев В. С.**, Древнеиранские языки, «Языки Азии и Африки», т. II, М., 1978, էջ 16-22: Հ. Աճառյանը, հայերենի ջ, ճ, չ հպաշփականների առնչությամբ նկատելով, որ դրանց «վրա նոր բարբառները ավելացրել են շնչել թրթռուն ջ', որով հայերենը հասել է ձիշտ սանսկրիտի հարստության» (**Աճառյան Հ.**, 1984, հատ. 6, էջ 199-200), ըստ էության, պարզ խոսք է (è)-ի հնչյունային (հնչյունական) արժեք է վերագրում հին հնդկերենի *c*-ին, այնինչ, ըստ սանսկրիտաբանների, այդ հնչյունը եղել է ոչ շնչել չ [č'] (տե՛ս **Зализняк А. А.**, 624. աշխ., էջ 788, **Елизаренкова Т. Я.**, Санскрит, էջ 31): Ինչ վերաբերում է «նոր բարբառների» ջ' [ջ]–ին, այսինքն շնչել ձայնող հպաշփականին, մենք արդեն ցույց ենք տվել, որ ինչպես նոր բարբառներում, այնպես էլ հին հայերենում այն կարող էր լինել <Ջ>-ի դիրքային տարբերակ, այն է՝ ունենալ միայն հնչյունական, բայց ոչ հնչյունային արժեք:

56 Ств Мейе А., Общеславянский язык, М., 1951, էջ 15-23, **Селищев А. М.**, Старославянский язык, ч. I, М., 1951, էջ 199-207, **Вайан А.**, 624. աշխ., էջ 71-72, **Горшков А. И.**, Старославянский язык, М., 1974, էջ 95:

57 Ств Петерсон М. Н., 624. աշխ., էջ 13-14:

58 Ств Десницкая А. В., Сравнительное языкознание и история языков, Л., 1984, էջ 223-224:

59 Ств Перозьян В. П., Греческий язык, ЛЭС, էջ 119: Հին հունարենի վերոհիշյալ հնչյունների հնչյունական արժեքի մասին պատկերացումները տարբեր են: Օր.՝ ըստ **Չ. Ջահուկյանի**՝ հին հունարենում առհասարակ հպաշփականներ չեն տարբերակվել (տե՛ս **Ջահուկյան Չ. Ք.**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼԳՆԺ), Եր., 1987, էջ 624): Մեր կարծիքով, սակայն, եթե ոչ 624-րդ դարի հնչյունների, ապա առնվազն չ-ի հպաշփական բնույթը հավանական է: Այդ մասին են վկայում զուգահեռները *սաւրը* խմբի ցեղակից լեզուներում:

կանների առաջացումը վերաբերում է նույն ժամանակաշրջանին, որովհետև հպաշփականների այնպիսի հարուստ և հետևողական համակարգ, որն ունեցել է հին հայերենը, հազիվ թե ձևավորվեր ավելի կարճ ժամանակում⁶⁰: Ավելին՝ առաջնաքմային [e] և [i] ձայնավորներին նախորդող դիրքում հետնաքմային c [k]-ի քմայնացումով հպաշփական հնչույթ է զարգացրել լատիներենը՝ c [c']-ն (հմմտ. գրային c-ի արտասանությունը դասական լատիներենում և *ժողովրդական լատիներենում* (вильгартный латинь)՝ [k] > [c']։ Cicero [kikero/կիկերո], ապա՝ [c'ic'ero/ցիցերո], Caesar [kaisar/կեսար], ապա՝ [c'ezar/ցեզար]⁶¹: Այն համեմատաբար ուշ շրջանի երևույթ է: Լատիներենում [k] > [c'] հնչյունափոխության համար ենթադրվում է միջանկյալ k_ օղակ (cervum [kervum] > k_ervu > cervus [c'ervus] «եղջերու»), որին այդ լեզուն հասել էր մ.թ. 2-3-րդ դարերում: Հնարավոր է, որ c [k]-ն քմայնացել էր արդեն Հռոմեական կայսրության դարաշրջանում⁶²: Սակայն *լոգոդրոսկյան* (Սարդինիա) և *դավնարինյան* (Դալմաթիա) բարբառներում «այդ կոշտ հնչյունը պահպանվել էր»⁶³: Նույն կերպ՝ g-ն վերածվել էր g_ -ի⁶⁴: Եթե դասական լատիներենից ժողովրդականին անցման ընթացքում հետնալեզվային c [k]-ն առաջնաքմային e-ին և i-ին նախորդող դիրքերում վերածվում է հպաշփականի, ապա ժամանակակից ֆրանսերենում նույն դիրքերում, ինչպես նաև y-ից առաջ c [k]-ն դառնում է շփական [s] (հմմտ. cent [sent] «հարյուր» (< ժղվ. լտ. [c'éntum] < դաս. լտ. centum [kentum] «հարյուր»), pièce [pies] «կտոր, մաս», cette [set] «այդ», ici [isi] «այստեղ», difficile [difisil] «դժվար, ծանր», cycle [sisl] «1. Հեծանիվ, 2. շրջան» ևն)՝ մյուս բոլոր դիրքերում պահպանելով իր հետնալեզվային արտաբերությունը: Պիտի կարծել, որ ֆրանսերենում հետնալեզվային [k]-ի անցումը շփական [s]-ի տեղի է ունեցել միջանկյալ [c'] հպաշփականի աստիճանով՝ [k] > [c'] > [s], այսինքն՝ հպականության հատկանիշի կորուստով:

Թեպետև հ.-ե. հին լեզուներից ոչ մեկը, բացառությամբ հայերենի, չի ունեցել ոչ շնչել խուլ (= պարզ) ծ (c) հպաշփականը, ճ (č) ունեցել է միայն վաղ պարթևերենը, իսկ ձ (j) տարբերակել են հին հունարենը և սլավոնական հին լեզուները, բայցևայնպես, ժամանակակից հնդկական մարաթի լեզուն ունի «ծեքական»⁶⁵ հպաշփականների չորս շարք (հմմտ. ձ (j), ձ' (j'),

60 Գ. Ջահուկյանը, հիմք ընդունելով իր առաջարկած *հետադարձ հաշվարկյան մեթոդը*, հայերենի հպական բաղաձայնների առաջին քմայնացման ժամանակը, երբ սկսվել է հպաշփականների ու շփականների կազմավորման գործընթացը, հասցնում է մ.թ.ա. 3-րդ հազարամյակ, այն է՝ հայերենի որպես ինքնուրույն լեզվի ձևավորման փուլը, իսկ երկրորդ քմայնացման ժամանակը, երբ իր լրումին է հասել այդ գործընթացը, նա տեղավորում է մ.թ.ա. 12-4-րդ դդ. միջև (տես *Джаукян Г. Б.*, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ер., 1967, էջ 328-329): Նախքան Գ. Ջահուկյանը Վ. Պորցիզը քմայնացածներից շփականների առաջացման ժամանակը, որի «օջախը» նա համարում է «արիական» (= հնդիրանական) լեզուները, վերագրում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին (տես *Порциг В.*, Членение индоевропейской языковой области, М., 1964: Սույն աշխատության բնագրային գերմաներեն տարբերակը լույս է տեսել 1954 թ.):

61 Տես «Латинский язык» (под общ. ред. *В. Н. Ярхо* и *В. И. Лободы*), М., 1983, էջ 17:

62 Տես *Бурсье Э.*, Основы романского языкознания, М., 1952, էջ 47:

63 Նույն տեղում, էջ 140:

64 Տես նույն տեղում, էջ 47:

65 Հ. Աճառյանի տեղմինն է (տես *Աճառյան Հ.*, ԼՔԼ, հատ. 6, էջ 198-200):

ծ (c), g (c')), այսինքն՝ նաև շնչեղ ձայնեղի հնչույթային կարգը: Դա հիմք է տալիս կարծելու, որ իբրև լեզվական համակարգ՝ հին հնդկերենն ունեցել է հպաշփականների հնչույթային կարգն ամբողջացնելու ներունակություն: Այդ լեզվում եղել են յուրահատուկ՝ *ցերեբրալ*⁶⁶ արտաբերությամբ հպական հնչույթներ (ձհ, զ, է, էհ), որոնք, ենթադրվում է, ունեցել են անգլերենի *լնդերբային* (անգլ. alveolar) d և t հնչյուններին մոտ արտաբերություն՝ շնչեղ և ոչ շնչեղ տարբերակներով⁶⁷: Թերևս հին հնդկերենում հնչույթների այդ շարքը ձևավորվել է համակարգայնորեն սուլականներին բնորոշ տեղում, սակայն չի վերածվել հպաշփականի:

Հպաշփական հնչույթներ ունեն նաև բազմաթիվ ժամանակակից հնդեվրոպական լեզուներ՝ ռուսերենը, գերմաներենը, իտալերենը, անգլերենը, իսպաներենը, բուլղարերենը, սերբերենը, լեհերենը, լատիշերենը, օսերենը, պարսկերենը, բելուջերենը⁶⁸, որոնք, ինչպես երևում է նշված ցանկից, ոչ միայն պատկանում են հ.-ե. տարբեր լեզվաձյուղերի՝ սլավոնական, գերմանական, իրանական, բալթյան, այլև ներկայացնում են հ.-ե. լեզուների տարածման երկու հիմնական տարածությունները (արեալները)՝ ինչպես արևմտյան (*կենտրոն*), այնպես էլ արևելյան (*սասրը*): Ըստ այդմ՝ արդարացված պիտի համարել ավանդական հնդեվրոպաբանության մեջ ձևավորված պատկերացումը, համաձայն որի՝ հպաշփականների առաջացման բուն պատճառ(ներ)ը պիտի որոնել նախահնդեվրոպական բաղաձայնական համակարգում: Այլհամակարգային (= ուրիշ ծագման), այդ թվում՝ քարթվելական լեզուների հետ մերձավոր շփումները (իմա՝ ենթաշերտային ներթափանցումները) կարող էին միայն այս կամ այն չափով նպաստել հպաշփականների ավելի ամբողջական համակարգի ձևավորմանը, բայց չէին կարող այդպիսի համակարգի առաջացման բուն պատճառը լինել⁶⁹:

Հայերենում հպաշփականների եռակարգ (այլ ոչ թե երկկարգ կամ քառակարգ) հնչույթային համակարգի առաջացումը պիտի բացատրել հպականների եռակարգ հնչույթային համակարգի առկայությամբ: Չնայած որ, ի տարբերություն հին հնդկերենի, հին հայերենում չի եղել շնչեղ ձայնեղ հպաշփականների հնչույթային կարգը, բայցևայնպես, հպաշփականների հայկական

66 Լատ. cerebrum (սեռ. -ի) «գլխուղեղ, բանականություն» բառից. հմմտ. անգլ. cerebral [ˈseribrəl] «ուղեղային»:

67 Տե՛ս Зализняк А. А., նշվ. աշխ., էջ 788:

68 Տե՛ս Աճառյան Հ., ԼԲՀԼ, հատ. 6, էջ 198-200, 213:

69 Հին հնդկերենի շնչեղ ձայնեղ հպականների հնչույթային կարգի առաջացումը ոմանք բացատրել են սահմանակից դրավիդյան լեզուների հնարավոր ազդեցությամբ (տե՛ս Барроу Т., նշվ. աշխ., էջ 348-349, Елизаренкова Т. Я., Грамматика ведийского языка, էջ 64-71, Պետրոսյան Վ. Ջ., Հայկական բաղաձայնների հնդեվրոպական համակարգը, էջ 106-107): Այդ դեպքում, սակայն, ինչպե՞ս բացատրել *քաշմիրի* լեզվի *քաշտավարի* բարբառում շնչեղ ձայնեղների հնչույթային կարգի առկայությունը: Մի լեզու, որը նույնպես պատկանում է հնդարիական լեզուների թվին (դարդյան ենթաձյուղ) և հ.-ե. նախալեզվից առանձնանալուց հետո իր գոյության ողջ ընթացքում մեկուսի դիրք է ունեցել տարածաշրջանի ինչպես հնդեվրոպական, այնպես էլ ոչ հնդեվրոպական լեզուների նկատմամբ (տե՛ս Эдельман Д. И., Дардские языки, էջ 254-261, Նույնի՝ Дардские языки, էջ 127):

համակարգն ամբողջական էր, որովհետև հայերենի հպականների համակարգը ևս եռակարգ էր⁷⁰:

3.1. Հնչույթային համակարգը և դատարկ վանդակը

Ըստ այդմ՝ հպաշփականներ տարբերակող հնդեվրոպական մյուս հին լեզուների հնչույթային համակարգերում առկա էին դատարկ վանդակներ: Այն լեզուները, որոնք առհասարակ չեն ունեցել հպաշփական հնչույթ⁷¹, հիմքեր չկան խոսելու նրանցում հպաշփականների դատարկ վանդակների գոյության մասին, որովհետև այդ լեզուների հնչույթային, մասնավորապես՝ բաղաձայնական համակարգերը ամբողջական են առանց հնչույթների այդ դասի: Այդպիսիք էին, օրինակ, գոթերենը և հին անգլերենը⁷²: Խեթերենում *z*-ի հպաշփական բնույթն ընդունելու դեպքում այն կլինի այդպիսի միակ հնչույթը տվյալ լեզվում⁷³: Ուստի, չունենալով իր խուլ լծորդը, *z*-ն առանձնակի դիրք է գրավել խեթերենի բաղաձայնական համակարգում⁷⁴: Ըստ այդմ՝ չի կարող խոսք լինել խեթերենի հնչույթային համակարգում հպաշփականների դասի գոյության մասին: Այդ հանգամանքը հիմք է խեթերենում խուլ հպաշփականի տեղում դատարկ վանդակի գոյությունն ընդունելու համար:

3.2. Քմայնացման տեսակների և դրանց հաջորդականության հարցադրումները

Հնդեվրոպական լեզվաբանության մեջ միասնական պատկերացում չկա ո՛չ առաջին ու երկրորդ քմայնացումների բնույթի և ո՛չ էլ դրանց գոր-

70 Տե՛ս Պետրոսյան Վ., Հին հայերենի ձայնեղ հպականները, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2019, N 1, էջ 40-51:

71 Լեզուն կարող է չունենալ տվյալ հնչույթը, բայց ունենալ նրա հնչյունական (= ենթահնչույթային) դրսևորումը, օրինակ՝ որպես հպականի դիրքային տարբերակ, որը ժամանակի ընթացքում կարող է վերածվել ինքնուրույն հնչույթի: Ավանդական համեմատաբանությունը, ըստ էության, այդպես էլ բացատրում է հպաշփականների առաջացումը, երբ դրանք դիտում է իբրև հպականների քմայնացման արդյունք (հմմտ. *medhjo s «միջին» > հյ. միջին (< մէջ>), սնակ. madhyah, լատ. medius, հն սլավ. межда, հն հուն. μέσ(σ)ος):

72 Տե՛ս Гухман М. М., Готский язык, М., 1958, էջ 60-62, Смирницкий А. И., Древнеанглийский язык, М., 1955, էջ 70-73:

73 Տե՛ս Фридрих Й., Краткая грамматика хеттского языка, М., 1952, էջ 51, Иванов В. В., Хеттский язык, М., 1963, էջ 70-85, Королев А. А., Хетто-лувийские языки, «Языки Азии и Африки», т. I, М., 1976, էջ 18:

74 Խեթերենի *z*-ին հնչույթաբանական ձայնեղություն կարող է վերագրվել, եթե կա, օր., նրա խուլ, շնչեղ խուլ կամ շնչեղ ձայնեղ լծորդը, որը, սակայն, չի նշանակում, թե հնչյունաբանորեն, այսինքն՝ ըստ արտաբերական-ձայնաբանական բնութագրերի, *z*-ն չի կարող ձայնել լինել: Օր. ինչպես հայերենում, այնպես էլ բազմաթիվ այլ լեզուներում կա մեկ տեսակի *h* [h], որը, ընդունված պատկերացման համաձայն, խուլ է՝ չնայած նրա ձայնեղ կամ մեկ այլ լծորդակից հնչույթի բացակայությանը: Հն հայերենի հնչույթային համակարգի լիիրավ անդամ է, որովհետև այն իմաստատարերակիչ հակադրությունների մեջ է մտնում համակարգի այլ հնչույթների հետ, այդ թվում՝ ձայնեղության-խուլության հատկանիշով (հմմտ. հայր ~ գայր. «գալ» բայի գրաբարյան անցյալ անկատարը՝ «(նա) գալիս էր»), բայց տվյալ հակադրության մեջ խուլությունը և ձայնեղությունը *h* (հ)-ի և *q* (ց)-ի միակ տարբերակիչ հատկանիշները չեն. դրանք տարբեր են նաև արտաբերության տեղով՝ *h*-ն կոկորդային (հագազային) է և շփական, իսկ *q*-ն հետալայեզվային է և հպական: Ուստի *h*-ն և *q*-ն չեն կարող լծորդակից հնչույթներ համարվել. տվյալ հակադրության մեջ *h*-ին խուլության հնչույթաբանական հատկանիշ կարող է վերագրվել միայն պայմանականորեն, որքանով որ հայտնի է *q* (ց)-ի ձայնեղ լինելը (հմմտ. *qh*ս (սեռ. *qúnj*) ~ *qh*ն (սեռ. *lúnj*), *qt*ս (սեռ. *qhunj*) ~ *qt*ն (սեռ. *qhf*ո) ~ *qt*տ (սեռ. *qhuf*ո) ~ *qt*տ (սեռ. *qhuf*ո) ևն):

ծողության ժամանակի հարցում: Տեսակետներից մեկի համաձայն՝ հ.-ե. հետաքննարկողների առաջին քմայնացումով կազմավորվել են սուլական հաջորդականները, իսկ շչականները երկրորդ քմայնացման արդյունք են⁷⁵: Մյուս տեսակետը, ըստ որի՝ գործել է հակառակ հաջորդականությունը, այսինքն՝ նախ ձևավորվել են շչականները, ապա՝ սուլականները, ընդունված է սլավոնագիտության մեջ (Ա. Սելիշչև, Գ. Խամբուրգև, Վ. Իվանով)⁷⁶: Սլավոնական լեզուների դեպքում քմայնացումների այդ հաջորդականությունն ընդունել է նաև Ա. Մեյեն, որն իր «Ներածության...» մեջ *սա-տրըմ* խմբի լեզուների համար ընդունում էր «առաջին» և «երկրորդ» քմայնացումների հակառակ (նախ՝ սուլական, ապա՝ շչական) հաջորդականությունը⁷⁷: Վերջինիս կարծիքով, օր., հին սլավ. *влькъ* «գայլ» (եզ. թ., անվն. հլ.) – *вльче* (եզ. թ., կոչ. հլ.) – *вльцъ* (եզ. թ., նրգ. հլ.) հոլովաձևերում նախ տեղի է ունեցել *к' > ч, ապա՝ *к' > ц հերթագայությունը⁷⁸:

Այն, որ նշված հերթագայությունները եղել են ինքնուրույն գործընթացներ, այլ ոչ թե շարունակական շղթայի օղակներ, այսինքն՝ ոչ թե *к' > ч > ц, վկայում են ինչպես լատիներենից գերմանական լեզուների միջնորդությամբ հին սլավոներենին անցած որոշ փոխառություններ (հմմտ. լատ. caesar (հուն. καῖσαρ) > գոթ. kaisar > սլավ. *цѣсар'ъ* > *цѣсарь* > *цар'*), այնպես էլ գոյականների հոլովական ձևեր (հմմտ. հն սլավ. *рѣка* [rouka] «ձեռք» (անվն.), *рѣцъ* (որ.-ներգ.)), բայերի խոնարհման ձևեր (հմմտ. *рѣкъ* «խոսեցի» (< *rēksom) > *рече* «խոսեցիր/խոսեց» (աորիստ)) և բառակազմական ձևեր (հմմտ. հն ու. ликъ₂ «տեսք, պատկեր» – лице «դեմք, գլխի առջևի մասը»)⁷⁹, որոնցում դրսևորվել է այդ գործընթացներից միայն մեկը:

Վերոհիշյալ հեղինակներից քմայնացման տեսակների միջև որոշակի հաջորդականությունը հիմնավորելու և դրանց ժամանակագրական հեռավորությունը (ինտերվալը) սահմանելու փորձեր են արել Ա. Սելիշչևը՝ հին սլավոներենի, իսկ Գ. Ջահուկյանը՝ հայերենի համար⁸⁰, սակայն լեզվական (= լեզվաբանական) փաստերի անբավարարության պատճառով այդ փորձերը առավելապես ունեն վարկածային արժեք:

75 Տե՛ս Մейе А., Введение..., էջ 117-120, Барроу Т., նշվ. աշխ., էջ 71-77, Иванов В. В., Топоров В. Н., Санскрит, М., 1960, էջ 66, Джаукян Г. Б., Очерки..., էջ 159-172, **Նույնի՝** Сравнительная грамматика армянского языка, էջ 54-64, Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. В., Индоевропейский язык и индоевропейцы, т. I, էջ 114-116:

76 Տե՛ս Селищев А. М., նշվ. աշխ., էջ 204-205, Хамбургев Г. А., նշվ. աշխ., էջ 143-150, Иванов В. В., Историческая грамматика русского языка, М., 1990, էջ 113-116: Ուշագրավ են հետևյալ իրողությունները. 1) թեպետև Ա. Սելիշչևը «առաջին» և «երկրորդ» քմայնացումների տերմինային տարբերակում չունի, բայց ակնհայտ է, որ նա ևս առաջին քմայնացման արդյունք է համարում շչականների, իսկ երկրորդ քմայնացման սուլականների առաջացումը հին սլավոներենում, 2) Ա. Բեռնշտեյնը առիասարակ քմայնացման («փափկացման») խնդիրը քննում է առանց որոշակի («առաջին», «երկրորդ» ևն) հաջորդականություն սահմանելու (տե՛ս Бернштейн С. Б., Очерк сравнительной грамматики славянских языков, М., 1961, էջ 301-304):

77 Տե՛ս Մейе А., Общеславянский..., էջ 72-76:

78 Տե՛ս Նույն տեղում, էջ 72:

79 Տե՛ս «Словарь древнерусского языка (XI-XIV вв.)», т. IV, М., 1991, էջ 402, 411:

80 Տե՛ս Селищев А. М., նշվ. աշխ., էջ 204-205, Джаукян Г. Б., Очерки..., էջ 328-330, **Նույնի՝** Сравнительная грамматика..., էջ 63-64:

4. Հայերենի հպաշփականների հիմնական նախածները և դրանց առաջացման ժամանակի հարցը

Վերադառնալով հին հայերենի սուլական (հմմտ. $2^{[h]}$ { $\delta[j]/\delta'[j']$ }, δ [c], δ [c']) և շչական (հմմտ. $2^{[h]}$ { $\delta[j]/\delta'[j']$ }, δ [č], 2 [č']) հպաշփականների տարաժամանակյա քննության խնդրին՝ պիտի նշել, որ այդ առումով առանձնահատուկ կարևորություն ունի հ.-ե. նախածների հետ դրանց համապատասխանությունների հարցը: Ըստ այդմ՝ առկա է հետևյալ պատկերը⁸¹.

1) Սուլականներ.

ա) ձայնեղ. $2 < *g'h$ (48), $*dh(i_{\wedge})$ (1), $*g'$ (1), $*i_{\wedge}$ (1), $*g(i_{\wedge})$ (1) – 52 բառ,

բ) ոչ շնչեղ խուլ. $\delta < *g'$ (51), $*ds$ (7), $*d(i_{\wedge})$ (4), $*dh(i_{\wedge})$ (1), $*g'h$ (1), $*g$ (1), $*g(i_{\wedge})$ (1) – 66 բառ,

գ) շնչեղ խուլ. $3 < *sk$ (21), $*sk'$ (12), $*k's$ (5), $*(s)k(i_{\wedge})$ (2), $*sk^u$ (1), $*t(i_{\wedge})$ (1), $*ts$ (3), $*ds$ (1), $*k^u t$ (1) – 47 բառ:

2) Շչականներ.

ա) ձայնեղ. $2 < *g^u h$ (9), $*i_{\wedge}$ (9), $*dh(i_{\wedge})$ (7), $*gh$ (3), $*t(i_{\wedge})$ (3), $*ki_{\wedge}$ (2), $*k't(i_{\wedge})$ (1), $*d(i_{\wedge})$ (1) – 34 բառ,

բ) ոչ շնչեղ խուլ. $\delta < *g(i_{\wedge}/\tilde{e}/e)$ (14), $*d(i_{\wedge})$ (5), $*dg(i_{\wedge})$ (1), $*tr-$ (?) (1), $*g'$ (1) – 22 բառ,

գ) շնչեղ խուլ. $2 < *k(i_{\wedge})$ (9), $*t(i_{\wedge})$ (6), $*k(s)(i_{\wedge})$ (2), $*k^u$ (3), $*k^u(i_{\wedge})$ (1) – 21 բառ:

Բնութագրական համապատասխանություններն են արտացոլում հետևյալ օրինակները.

$*ang'hu-$ > *անձուկ* «նեղ», $*g'h\tilde{a}g^u h$ > *ձագ*, $*g'hesr-$ > *ձեռն*, $*meg'h-ri-$ > *մերձ* ($*g'h > \delta$),

$*aig'i-$ > *այծ* (-ի), $*r.g'i-n-$ > *արծաթ* (-նյ), $*leug'-$ > *լոյծ*, *լուծ-անեմ* ($*g' > \delta$), $*sed-s-$ > *հեծ*-*(անեմ)* ($*ds > \delta$), $*kerdi_{\wedge}o-$ > *քերծ* ($*d > \delta$),

$*skeli-$ > *ցեղ* (-ի), $*sker-$ > *ցիր* (*ցիրի*) ($*sk > g$), $*sk'ur-do-$ > *ցուր* (-նյ), $*sk'akh\tilde{a}$ > *ցախ* ($*sk' > g$), $*k'sapo-$ > *ցալ* (-նյ) ($*k's > g$),

$*g^uhermn_.$ > *ջերմ*, $*g^u h\tilde{i}-sl\tilde{a}$ > *ջիլ/ջիղ* ($*g^u h > \delta$), $*i_{\wedge}uro$ > *ջուր* (-նյ) ($*i_{\wedge} > \delta$), $*me(i)dhi_{\wedge}o-$ > *մեջ* ($*dh > \delta$),

81 Հաշվումները՝ ըստ **Զահուկյան Գ. Բ.**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 111-157-ի բառացանկի:

*l-gi_̇- (?) > աղճապ (?) (*g > ճ), *gē-ki_̇-o- (?) > ձիչ (*g > ճ), *gem- > ճմ-լ-եմ «ձգմել, տրորել» (*g > ճ), *rodi_̇-e- > որոճեմ, *gidi_̇-o- > կիճ «մարմար» (*d > ճ),

*k^uet_uores > չորք, *gē-ki_̇-o- > ձիչ (*k > չ), *khoti_̇-o- (?) > խոչ, *g^uoti_̇-e- > կոչ-եմ (*t > չ), *ok^ui > սչք (*k^u > չ):

Եթե, հիմք ընդունելով վերոհիշյալ համապատասխանությունների բանական բնութագրերը, կարելի է հ.-ե. հիմնական նախածներ համարել *g'h-ն հյ. ձ (j), *g'-ն հյ. ծ (c), *sk/(^{*}sk)-ն հյ. g (c') սուլականների, իսկ *g(i_̇/ē/e)-ն ճ (č), *k(i_̇)-ն չ (č') (վերապահունով՝ նկատի ունենալով *k-ի նաև մյուս դիրքային տարբերակները՝ *k(s), *k^u, *k_u) շչականների համար, ապա դժվար է նույնը ասել նաև ջ (j)-ի դեպքում, որովհետև վերջինի ոչ մի նախածն քանական գերակայություն չունի մյուսների համեմատությամբ: Այսպես, հյ. ջ (j)-ի համար վերականգնվում է հետնալեզվային *g^h-ով 9, ատամնային *dh-ով 7 և *i_̇ կիսաձայնով 9 նախածն, վերջիններից 4-ը՝ բառակազմում՝ ձայնավորանախորդ դիրքում (հմմտ. *i_̇uro > ջուր (-ոյ), *i_̇ə-nā-mi (?) [*i_̇ā, *i_̇ō] > ջան-ամ/-ք, *i_̇o_u-o- [*i_̇e_u-o-] > ջուլ «ընծյուղ, ծիլ», *i_̇u-s [*i_̇u-, *ues] > (*ջոք) > դոք): Լայն առումով՝ վերականգնվում է հետնալեզվային հպականով 14 (ներառյալ *gh-ն և *k-ն) և ատամնայինով 11 նախածն: Ընդհանուր առմամբ ջ (j)-ն, ինչպես և մյուս հպաշփականները, համարվում է հետնաքնայինի և շրթնահետնաքնայինի քնայնացման արդյունք առաջին շարքի i/(ī) և e/(ē) ձայնավորներին նախորդող դիրքում (հմմտ. *g^hhene- > ջնեմ (-եցի) «գավազանով ծեծել», *g^hheros- > ջեր (-ոյ/-ի) «տաք», *g^hhī-slā > ջիլ / ջիղ, *orghilo- > n(r)ջիլ (-ոյ, -աց) են), բայց, ինչպես երևում է նաև նշված թվերից, հպաշփականներ կազմավորվում են նաև ատամնայինների և *i_̇ կիսաձայնի համակցումով (հմմտ. *me(i)dhi_̇-o- > մէջ, *sterdhi_̇ā > սրերջ «ամուլ», *g^hhendi_̇-o- (?) > գէջ (-ոյ) «1. թաց, 2. վավաշոտ», *pōrti_̇-o- > ուրջոյ (?) «խորթ գավակ», *r. ḳti_̇-o-s- (?) > սրջ (-ոյ/-ու): Օրինաչափությունից շեղում է, սակայն, հպաշփականի, տվյալ դեպքում՝ ջ (j)-ի առաջացումը *i_̇-ից: Ավելին՝ առանձին դեպքերում բառակազմի դիրքում հ.-ե. *i_̇-ի արտացոլումներն են՝ ա) l-ն՝ հայերենում (հմմտ. *i_̇ek^ur. (t) > լեսար⁸², *i_̇ugom > լուծ (-ոյ)), խեթերենում (հմմտ. lišša «յարդ») և գերմանական մի շարք լեզուներում (հմմտ. պրուս. Iagno, հն իսլ. lifr, անգլ. lifer, անգլ. liver, հրգ. lebara, գրմ. Leber, բուրն էլ՝ «յարդ» նշանակությամբ), բ) y/j-ն՝ հնդիրանական

82 Հ. Հյուբշմանը հայերեն լեսարի համար առաջարկել է *iipart նախածնը՝ նույնականություն տեսնելով գերմ. Leber-ի հետ (տե՛ս Հյուբշման Հ., Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2004, էջ 198): Յոհ. Շմիդտը և Պյուրպիլիդը առաջարկել են *lyēk^ur (իմա *lyēkyrt – Վ. Պ.) նախածնը (տե՛ս Հյուբշման Հ., Հայերենի քերականություն, Եր., 2003, էջ 452, Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հատ. II, Եր., 1973, էջ 271): Հ. Պեդերսընը ստուգաբանական քննության է ենթարկում այս բառը, բայց որոշակի նախածն չի առաջարկում (տե՛ս Պեդերսըն Հ., Հայերեն եւ դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 31-32. ըստ Հ. Աճառյանի առաջարկում է *lek^ur նախածնը (տե՛ս նույն տեղում), որ, մեր կարծիքով, շփոթումը է):

լեզուներում (հմմտ. սնսկ. *yákr* t «յարդ», ավեստա *yākarə* «յարդ»), թոխա-րական A-ում (հմմտ. *yokäm* «յարդ»), լիտվերենում (հմմտ. *jāknos*, բրբռ. *e~knos* «յարդ»), գոթերենում (հմմտ. *juk* «յարդ»), գ) **i**-ն՝ լատիներենում (հմմտ. *iecur* «յարդ») և օսերենում (հմմտ. *iger*, *igār* «յարդ»), դ) **ʷ**/(*h*)-ն և **z** (*j*)-ն՝ հունարենում (հմմտ. ***i₂ekʰr** (t) > ἥπαρ [*hēpar*] «յարդ»⁸³, ***i₂ugom** > հուն. **ζυγόν** «լուծ», ***i₂ə-ni-**/***i₂a-ni-** «գրգռված լինել. պատժել, վրեժ լուծել» > հուն. **ζῆλος**, դոր. **ζῆλος**), ե) **ʃ**-ն՝ իրանական մի շարք լեզուներում (հմմտ. պիլ. **ʃakar**, պրս. **ʃigar**, քրդ. **ʃiger**, **ʃerk**, աֆղան. **ʃigar**, բելուձ. **ʃagar**, բուլղոս էլ՝ «յարդ» նշանակությամբ), գ) **θ**-ն՝ լատիշերենում (հմմտ. *akrna* «յարդ»): Բնական է, որ համապատասխանությունների այդպիսի բազմազանությունը մեկ ընդհանուր նախաձևի հանգեցնելը իրատեսական չէ, ուստի դրանք ստացել են տարբեր մեկնաբանություններ՝ բաղարկության (կոնտամինացիա-յի) արդյունք, կոկորդային հնչյունի ազդեցություն, իրանական բաղադրիչի առկայություն հայերենի ջ (*ʃ*)-ով ձևերի դեպքում⁸⁴, «տաբուական ձևափոխությունների» համաբանական ներգործություն Լ-ով սկսվող ձևերի դեպքում⁸⁵ և այլն: Հետևաբար **h.-ե.** ***i₂** > **hj**. ջ (*ʃ*) համապատասխանության կողքին «**h.-ե.** հետնալեզվային > **hj**. ջ (*ʃ*)», մասնավորապես՝ ***gʷh** > **hj**. ջ (*ʃ*) անցումների ինչ-պես ավելի մեծ քանակությունը, այնպես էլ առհասարակ հպաշփականների առաջացման ընդհանուր միտումը (տիպաբանությունը) վկայում են այն մասին, որ **hj**. ջ (*ʃ*)-ի բուն նախաձևը, այնուամենայնիվ, եղել է հետնալեզվային հնչյոթ, թերևս հենց շրթնահետնաքմային ***gʷh**-ը՝ որպես **h.-ե.** Հետնալեզվային կիրառական տարբերակներից մեկը: Հօգուտ այդ տեսակետի վկայում են ինչպես **h.-ե.** (պորտուգալերեն⁸⁶), այնպես էլ ոչ **h.-ե.** (արաբերեն⁸⁷) լեզուների գրավոր շրջանի պատմության տիպաբանական գուգահեռները:

Վերոշարադրյալը հիմք է տալիս հետևյալ նկատառումների համար.

1) Հետնալեզվայինների հնչյունական տարբեր շարքեր (հետնաքմային, քմային, շրթնահետնաքմային) ներկայացնող նախաձևերի վերականգնումը միևնույն հնչյոթի համար (հմմտ. ***gʷh**/***gh** > ջ, ***k**/***k̥** > ջ, ***k(s)**/***k̥s** > ջ, ***sk**/***s̥k** > գ) հիմք է տալիս ասելու, որ նշված երեք շարքերն ընդհանուր հնդեվրոպականում ինքնուրույն հնչյոթներ չէին, այլ միևնույն հնչյոթի կիրառական տարբերակներ, ընդ որում՝ դիրքային ոչ խիստ բաշխումով, ուստի և կարող էին փոխարինել մեկը մյուսին: Այս դեպքում ավելի շուտ կարող է խոսք լինել հնչյոթի ազատ փոփոխակների մասին, քան թե այլահնչակների⁸⁸:

83 Համարվում է, որ հունարենի ἥπαρ-ը առաջացել է *λαπαρός* «ձարաղտ» ձևից: Տե՛ս **Джаукян Г. Б.**, Сравнительная грамматика..., էջ 40:

84 Տե՛ս **Джаукян Г. Б.**, Очерки..., էջ 297, **Ուղյծի՝** Сравнительная грамматика..., էջ 212, ծմբ. 39:

85 Տե՛ս **Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. В.**, Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тбилиси, 1984, էջ 815:

86 Տե՛ս **Серебрянников Б. А.**, Вероятностные обоснования в компаративистике, М., 1974, էջ 133:

87 Տե՛ս նույն տեղում, էջ 144:

88 Քանի որ հնդեվրոպաբանության մեջ ինչպես առհասարակ հպականների շնչել և ոչ շնչել տարբերակների (հմմտ. ***bh** և ***b**), այնպես էլ հետնալեզվայինների հետնաքմային, քմային և շրթնահետնաքմային շարքերի (հմմտ. ***g**, ***gʷ**, ***gʷh**) հարցը դիտարկվել է միայն դրանց որպես ինքնուրույն հնչյոթների տեսանկյունից, ըստ այդմ չկան

2) Մի կողմից՝ սուլականների և շչականների համար ատամնային հպականներով ընդհանուր նախաձևեր (հմմտ. *dh > ð/ð/ջ, *d > ɔ/ջ/ճ, *t > ց/ջ/չ), իսկ մյուս կողմից՝ միևնույն հպաշփականի համար և՛ հետնալեզվային, և՛ առաջնալեզվային հպականով նախաձևեր վերականգնելը (հմմտ. *gʰ/*dh > ջ (յ), *k/*t > չ (չ՛)) կարող էր հիմք լինել այդ գործընթացները ժամանակագրական տարբեր շերտերի վերագրելու համար, ինչպես որ վարվել են ավանդական հնդեվրոպաբանության ներկայացուցիչները, որովհետև առերևույթ դրանք վկայում են միմյանցից սկզբունքորեն տարբեր գործընթացների մասին: Սակայն հիմնահարցի այդպիսի հանգուցալուծումը կարող էր արդարացված լինել, եթե նշված նախաձևերն իրենց տեսակարար կշռով համարժեք լինեին: Իսկ իրականում, օր., *gʰ-ը և *dh-ը ð (j)-ի համար կամ *g՛-ն ɔ (c)-ի և ǰ (չ)-ի համար բոլորովին էլ նույն արժեքը չունեն: Մեր կարծիքով՝ առավել հավանական է, որ փոքր ցուցիչով համապատասխանությունները (հմմտ. *g՛ > ǰ (չ) (I)-ն՝ *g՛ > ɔ (c) (51)-ի դիմաց) համաբանական գործընթացների արդյունք են, որոնք կարող էին տեղի ունենալ գրեթե միաժամանակ կամ առանց ժամանակագրական մեծ ընդմիջման: Հետևաբար վերականգնվող բոլոր ձևերը ոչ միայն չեն կարող հիմք ընդունվել հպաշփականների բուն նախաձևերը սահմանելիս, այլև բավարար հիմքեր չեն տալիս հպաշփականների երկու շարքերի՝ սուլականների և շչականների կազմավորման տարանջատված հաջորդականություն սահմանելու համար:

3) Հ.-ե. *i̇ > hj. ð (j) համապատասխանությունը, որը առաջարկվում է ձու «հավկիթ» բառի համար (հմմտ. ձու < *i̇ ði̇ om-)⁸⁹, դեռևս չի վկայում, որ *i̇-ն կարող էր hj. ð (j)-ի բուն նախաձևը լինել: Այդպիսին կարող էր լինել *gʰ-ը (իսկ ավելի հավանական է՝ *Gʰ[hl]-ն), որը վերականգնվում է 48 բառի դեպքում: Հ.-ե. *i̇ > hj. ð (j) անցումը կարող է վերաբերել նախաձևերի մերձավոր վերականգնմանը⁹⁰, իսկ հեռավոր վերականգնման հայեցակեր-

դիրքային բաշխվածության հատուկ ուսումնասիրություններ, հետևաբար *հնչույթ-այլահնչակ-ազատ փոփոխակ* հարաբերակցության առումով դժվար է վերջնական խոսք ասել, բայց ոչ խորքային դիտարկմամբ հազիվ թե հնարավոր է դրանց միջև հստակ դիրքային բաշխում, այսինքն *լրացուցիչ բաշխման* հարաբերություն ցույց տալ: Հետևաբար ավելի հավանական է, որ նշված շարքերի միջև եղել են ազատ հերթազայման (փոփոխակման), այլ ոչ թե այլահնչակային հարաբերություններ:

89 Տե՛ս **Ջահուկյան Ք. Բ.**, ՀԼՊՄԺ, էջ 142, **նույնի** Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 477: Հյ. ձու «հավկիթ» բառի համար առաջարկված տարբեր նախաձևերից և ոչ մեկը Հ. Հյուբշմանը (տե՛ս **Հյուբշման Հ.**, Հայերենի քերականություն, էջ 471, **նույնի** Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 206) և Հ. Աճառյանը (տե՛ս **Աճառյան Հ.**, ՀԼՄ, հատ. III, Եր., 1977, էջ 159) համոզիչ չեն համարել: Նրանց կարծիքով խնդրահարույց է մասնավորապես, հ.-ե. *i̇ > hj. ð (j) համապատասխանությունը բառակցի դիրքում: Հ. Պետերսընը առաջարկել է *ǰio նախաձևը, որից էլ «նմանաձայնեթամք *ǰio- մը գոյացած էր» (**Պետերսըն Հ.**, նշվ. աշխ., էջ 116): Բառակցի դիրքում *i̇ > ð (j) անցման համար կարող են դիտարկվել, օրինակ, *ծեր* և *ծավար* բառերի հ.-ե. որոշ ցեղակից ձևեր (հմմտ. *i̇us > սնսկ. yñyám «դուք» (սեռ. yusmā́ kam «ծեր» (< *ues/*uos)), ավեստ. yñs և yñz-am, լիտվ. ցո «դուք», գոթ. ius «դուք», *i̇ygo- «գարի»։ սնսկ. և ավեստա yava «գարի», արսկ. jav «գարի», լիտվ. jawai «ցորեն», հուն. ζεία «հաճար, ծավար»՝ κρι, κριθή-ի «գարի» կողքին (տե՛ս **Гамкрелдзе Т. В., Иванов Вяч. В.**, նշվ. աշխ., т. II, էջ 656)), որոնք հավանական են դարձնում Հ. Պետերսընի վարկածը որպես hj. ձու բառի անմիջական նախաձև, այն է՝ մերձավոր վերականգնման հայեցակերպում: Մյուս կողմից, եթե *i̇ > y/j համապատասխանություն օրինաչափ է, ապա նույնը դժվար է սսել *i̇ > hj. ð (j) / հուն. չ-ի մասին: Ըստ Ա. Մեյեի՝ բառակցում հ.-ե. *i̇ (*y)-ի դիմաց հուն. ζ (j)-ն (հմմտ. *i̇jugom > հուն. ζυγόν «լուծ») «հունական նորակազմություն է, որի առաջացման պայմանները չեն կարող որոշվել» (**Мейе А.**, Введение..., с. 134):

90 Հ.-ե. նախալեզվի մերձավոր և հեռավոր վերականգնումների մասին տե՛ս **Тронский И. М.**, նշվ. աշխ., էջ 35-41:

պում հյ. *ānu* բառը պիտի ունենար *g'hi₁ōi₁- նախածնը: Կարծում ենք՝ հայերենի *ānu* բառի համար *i₁ōi₁om-, այլ ոչ թե *g'hi₁ōi₁-(om-) տիպի նախածնի վերականգնումը թելադրված է եղել ցեղակից լեզուներում առկա ձևերով, որոնց համար առաջարկված *ō₁i₁om նախածնը⁹¹ ևս պիտի վերագրել հ.-ե. մերձավոր վերականգնմանը:

Հայերենի հպաշփականների տարածամասակյա զարգացումների տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն նաև դրանց համապատասխանությունները ցեղակից (հնդեվրոպական) և ոչ ցեղակից (ոչ հնդեվրոպական) հին լեզուներից կատարված փոխառություններում:

Ըստ այդմ՝ ունենք հետևյալ պատկերը.

ա) Հնդեվրոպական փոխառություններ.

Իրանական լեզուներ-հայերեն. օ > ձ (հմնտ. մ.պ. amīč «որսի մտով կերակուր» > հյ. *ամիճ* (-ոյ) «մտեղեն կերակուր», մ.պ. andāčak «ապացույց, օրինակ» > հյ. *անդաճել* / (*անդիճել*) «մտածել, խորհրդածել», ավ. čaxra «անիվ», պ. čarx «անիվ, ճախարակ» > հյ. *ճախարակ* (ի-ա) ևն), *յ/z > ձ* (հմնտ. պրթ. 'ndrz (andarz) «պատգամ, պատվիրան» > հյ. *անդարձ* (-ի) «կտակ, պատվիրան», ավ. harəz-, պրթ. hyrz (< *hrj/z-) «արձակել» > հյ. *արձակ* (ի-ա) (*յարձակի*)), պ. varza «վաստակ» (< *varj/varz) > հյ. *վարձ* (-ու), *յ/j > ձ* (հմնտ. պ. birinj (մեղ.՝ ?), birinj > հյ. *բրինձ* (-ոյ), մ.պ. ganj (< *ganj) > հյ. *գանձ*), *յ > ջ* (հմնտ. պ. abranjan (< *aparanjan) > հյ. *ապարանջան*), *յ/č > ջ* (հմնտ. պ. āmāj (< *māč) > հյ. *մաճ* (-ոյ)), *յ/y > ջ* (հմնտ. ավ. yātu-, մ.պ. yātūk, պ. jādū (< jātūk < *yātūka) > հյ. *ջայրուկ* «կախարդ» (հյ. բրբռ. *ջայրու*), պ. jōx (< *jōk (*yauka-(?))) > հյ. *ջուկ* (ի, ո)), *յ/g > ջ* (հմնտ. պրթ. tng, tngg «վիշտ, տանջանք, ցավ», պ. tanjīdan «սեղմվել, կուչ գալ» (< *tanj-) > հյ. *յրանջ*-, *-յրանջ*):

Հունարեն - հայերեն. օ (s) > ց (հմնտ. ἐκκλήσις > հյ. *եկեղեցի* «ժողովուրդ, բազմություն, հավաքույթ. տաճար»), *տօ (ts) > ձ* (հմնտ. Βούρτισα > հյ. *վրձին*):

Լատիներեն-հայերեն. ti > ջ (հմնտ. lentium > հյ. *ղենջակ* «զոգնոց, անձեռոց, սրբիչ»):

բ) Ոչ հնդեվրոպական փոխառություններ.

Կովկասյան լեզուներ-հայերեն. ց' > ծ (հմնտ. մեգր., ճան. xoc' «կեղևը հանել», վրաց. xwec' «տաշել» > հյ. *խծծել* «կտրտել, պատառոտել»), *յ > ջ* (հմնտ. մեգր., ճան. yej «խոզ» > հյ. *խոճ*- «խոզ» (*խոճ-կոր*) (< *yoj-). հյ. բրբռ. *գոջ*/'ձ-(ի)), *չ' > ձ*, *յ > ջ/ձ* (հմնտ. մեգր. č'anji, č'andi, ճան. mč'a'ji, վրաց. mc'erī «ճանձ», քարթվ. *mc'er > հյ. *ճանձ*, *ճանջ*), *ց' > ձ* (հմնտ. զան. c'irp-,

91 Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. III, էջ 159: Այդ նախածնի հետ է կապվում նաև Հ. Պետրսընի առաջարկած *ō₁o- (< *jō₁o-) նախածնի համար (տե՛ս Պետրսըն Հ., նշվ. աշխ., էջ 116):

վրաց. *c'irpli* «ձայրոս» > հյ. *ճիպր/ձայրոս* «աչքի կեղտ»), *c'/c* > **ծ** (հմնտ. վրաց., ձան., մեգր. *c'on-*, ձան. *cin-* «կշռել» > հյ. *ծանր* (սեռ. *ծանու*, հզն. *ծանունք*) ևն):

Սեմական լեզուներ-հայերեն. **z** > **ծ** (հմնտ. ակկադ. *zīzu*, եբր. *zīz*, արամ. *zīzat* «կուրծք, ստինք (կենդ.)» > հյ. *ծիծ*), **š** > **ծ** (հմնտ. ասոր. արամ. *būšīnā* «պատրույզ, մոմակալ» > հյ. *բուծիս* (-ոյ) «պատրույզ», ասոր. *našrāyā*, արաբ. *našrānī* > հյ. *նածր*-(ացի) «նագովրեցի», ասոր. *šəḏīdā* > հյ. *ծարիր* (-ոյ) «աչքի սև ներկ», եբր. *šōm*, արամ., ասոր. *šōm*, *šōmā*, արաբ. *šaum* «ծոմ պահել» > հյ. *ծոմ* ևն), **š** > **ց** (հմնտ. ասոր. *āšā* > հյ. *սոց* (-ի, -ից) «կարիք», արամ./ասոր. *ḥaššīnā* > հյ. *կսոցիս* (-ոյ), ակկադ. *ḥuššu(m)* «եղեգնաշեն խրճիթ» > հյ. *խուց*⁹² ևն), **z** > **ձ** (հմնտ. ասոր. *'azrurā* > հյ. *խանձարուր* (-ոյ), արամ., ասոր. *zēt*, եբր. *zayit* > *ձէթ* (-ոյ) ևն), **ḫ** > **ձ** (հմնտ. արաբ. *mahja* ' «ննջարան» > հյ. *մսոհձ* (-ի)), **s** > **ց** (հմնտ. ակկադ. *sāsu(m)*, արամ. *sās(ā)*, եբր. *sās*, արաբ. *sūs(un)* > հյ. *ցեց* (-ոյ)), **z/(s)** > **ց** (ակկադ. *zarū(m)* / (*sarum*), ասոր. *zarā' u* «ցրել» > հյ. *ցիր*, *ցրիվ* ևն):

Խուներեն-հայերեն. **z** > **ձ** (հմնտ. *ḫinzuri* «խնձոր» > *խնձոր*), **z** > **ծ** (հմնտ. *zizzii_a* «կուրծք, ստինքներ» > *ծիծ*)⁹³:

Նշված օրինակներից երևում է հետևյալը: 1) Ինչպես ցեղակից, այնպես էլ ոչ ցեղակից լեզուներից կատարված փոխառություններում, որպես կանոն, սուլականը փոխարինվում է սուլականով, իսկ շչականը՝ շչականով, բայց համապատասխանությունը բացարձակ չէ. ոչ հազվադեպ հայերենում հպաշփական սուլականով են արտացոլվում օտար լեզվի շփական սուլականը (հմնտ. *s* > **ծ** (*c*)/*g* (*c'*), *z* > **ձ** (*j*), *σ* (*s*) > *g*, *z* > **ծ** (*c*)) կամ ցերեքրալ սուլականը (հմնտ. *š* > *g*): 2) Եթե փոխատու և փոխառու լեզուներն ունեն միևնույն հնչույթը, ապա ընդհանուր առմամբ առկա է համարժեք փոխառություն: Երբեմն, սակայն, այդ սկզբունքը խախտված է, օր.՝ շնչեղ խուլ շչականը կարող է փոխարինվել ոչ շնչեղ խուլ շչականով (հմնտ. *č'(z)* > *ձ*), կամ շնչեղ խուլ սուլականը՝ ոչ շնչեղ խուլ սուլականով (հմնտ. *c'(g)* > **ծ**): Միաժամանակ ուշագրավ է այն իրողությունը, որ փոխատու լեզվի շչականը հայերենում չի փոխարինվում սուլականով, և ընդհակառակը՝ փոխատուի սուլականը հայերենում չի փոխարինվում շչականով: Իրանական (*Ϸ*) > հյ. **ձ** (*j*) համապատասխանությունը (հմնտ. պ. *birinǰ* > հյ. *բրինձ* (-ոյ), մ.պ. *gan* (< **ganj*) > հյ. *գանձ*

92 Պատրուբանին, Պետերսոնը և Պոկոնին բխեցնում են հ.-ե. *(s)keu- «ծածկել» արմատից (տես **Ջահուկյան Գ. Բ.**, ՀԼՊՄԺ, էջ 462):

93 Այս փոխառությունները «ոչ հնդեվրոպական»-ների տակ զետեղում ենք վերապահումով, որքանով որ *խուներեն* կոչված լեզվի ծագումնաբանության հարցը լեզվաբանության մեջ առ այսօր մնում է վիճելի: Ոմանք խուներենին ցեղակից են համարել *ուրարտերեն* կոչված լեզուն՝ այդ երկուրդ դիտելով փոքրասիական բնիկ լեզուներ: Մեր կարծիքով, սակայն, ուրարտերենը հայերենի վաղ դրսևորումներից է՝ չնայած այդ դրույթի ապացուցելիության որոշակի դժվարություններին (այդ խնդրին անդրադարձել ենք «Հին հայերենի հպաշփականների ծագման «կովկասյան վարկածի» շուրջ» հոդվածում, որն ընդգրկվել է «Հայկագեան հայագիտական հանդէպի» 2021 թ. տարեգրքի հրատարակելի նյութերի ցանկում), հետևաբար խուներենի ծագումնաբանության և ցեղակցական կապերի հարցի որոշումն ավելի է բարդանում, քանզի նույն բանը չենք կարող ասել խուներենի համար:

(-ու)) համեմատաբար ուշ առաջացած երևույթ է և հայերենի *բրինձ*-ի անմիջական աղբյուրը չէ: Ըստ Հ. Աճառյանի՝ հայերենի *բրինձ* բառը փոխառություն է պահպանված ձևից, որը, սակայն, չի պահպանվել⁹⁴, իսկ Գ. Զահուկյանի կարծիքով՝ հայերենի *բրինձ* բառի անմիջական փոխատու լեզուն կարող էր լինել մեդերերը (հմմտ. մեդ. (?) *birinj*)⁹⁵: Թերևս Հ. Աճառյանի բացատրությունն ընդունելի է նաև հյ. *գանձ* բառի փոխառության անմիջական աղբյուրի որոնման հարցում: Հետևաբար տվյալ դեպքում ևս համապատասխանությունը նույնական է: 3) Հունարենից և լատիներենից կատարված փոխառություններում առկա են «հ.-ե. նախաձև-հայերեն» առնչություններում դրսևորված (իհարկե, ոչ ամենից բնութագրական) անցումներին հատուկ համապատասխանություններ, այն է՝ «(ատամնային հպական + սուլաշփական) > հպաշփական» (հմմտ. τσ (ts) > ձ), «(ատամնային հպական + առաջին շարքի ձայնավոր) > հպաշփական» (հմմտ. ti > ջ):

Եզրակացություններ

Վերոհիշյալ դիտարկումները հիմք են տալիս անելու հետևյալ եզրահանգումները.

1) Ընդհանուր հնդեվրոպականում եղել է ձայնեղ և խուլ հետնալեզվայինների մեկական հնչույթային կարգ՝ *G և *K, որոնցից յուրաքանչյուրը ներկայացված է եղել երեք՝ հետնաքմայինների (*g/*k), քմայինների (*g'/*k') և շրթնահետնաքմայինների (*g^u/*k^u) հնչյունական դասերով: Այդ դասերը, ըստ ամենայնի, միայնաց նկատմամբ գտնվել են ազատ փոփոխական հարաբերության մեջ: Նշված դասերից հետնաքմայինները և շրթնահետնաքմայինները ունեցել են շնչեղ և ոչ շնչեղ դիրքային (= ենթահնչույթային) տարբերակներ, ինչպես՝ *g/*g^[h], *k^u/*k^{u[h]}: Բոլոր հպաշփականներն էլ հ.-ե. հետնալեզվայինների ձևափոխությունների արդյունք են: Ինչ վերաբերում է հպաշփականների՝ ատամնայիններով կամ կիսաձայն *i_~-ով նախաձևերին, դրանք, ըստ ամենայնի, համեմատաբար ուշ սկիզբ առած հնչյունաբանական տարբեր գործընթացների (օրինակ՝ համաբանության) կամ ենթաշերտային ազդեցության դրսևորումներ են:

2) Պատմահամեմատական նվաճումների արդի մակարդակը դեռևս բավարար հիմքեր չի տալիս սուլաշփականների առաջացման ընդհանուր գործընթացում երկու տարբեր քմայնացումների, այն է՝ սուլականացման և շչականացման միջև ժամանակագրական հստակ հաջորդականություն սահմանելու համար: Ավելի հավանական է, որ նշված երկու քմայնացումները զուգահեռ ընթացող գործընթացներ էին, կամ, առնվազն, դրանցից

94 Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. I, Եր., 1971, էջ 492-493:

95 Տե՛ս Զահուկյան Գ. Բ., ՀԼՊՆԺ, էջ 520:

մեկն սկսվել է նախքան մյուսի ավարտվելը՝ դրա գործողության ինչ-որ փուլում: Մյուս կողմից՝ բավարար հիմքեր չկան պնդելու, թե դրանցից հատկապես որն է ավելի շուտ սկսվել:

3) Հպաշփականները բնորոշ էին մասնավորապես արևելյան տարածույթի (արեալի) հ.-ե. լեզուներին, բայց դրանց առանձին ներկայացուցիչներ ունեին նաև արևմտյան տարածույթում գտնվող հունարենը և փոյուգերենը: Դատելով փոյուգերենի՝ հունական գրությամբ հայտնի բառաձևերի հնչույթային կազմից՝ այդ լեզվում եղել է ամնվազն մեկ հպաշփական՝ չ [j]-ն (հմմտ. փոյգ. ἀζήν «մորուք», հուն. γένυς «կրկնակզակ»), չի բացառվում, սակայն, նաև ξ [ks]-ի գոյությունը (հմմտ. փոյգ. εξίς / (εζίς- (?)) «ոզնի», լիտ. ežys, լատիշ. ezis, ու. ёж)⁹⁶: Եթե առհասարակ նկատի ունենանք, որ հ.-ե. լեզուների բաժանումը *սայրը* և *կենտում* խմբերի՝ ըստ այդ լեզուներում հետնալեզվայինների արտացոլման, բացարձակ չէ, քանզի կան նաև խառն դրսևորման դեպքեր (հմմտ. ***kreu-** «արյունալի, հում միս». հուն. κρέ(φ)ος «միս», լատ. cruor «արյուն», հն պլավ. κρεῖβ [krɛ̃vɪ] «արյուն», սնսկ. **kravis-**, **kravyam** «հում միս», ***nogho-** «մագիլ, ոտք». հուն. ὄνυξ, ὄνυχος «եղունգ, մագիլ», լատ. unguis «եղունգ», լիտվ. nagas «եղունգ», հն պլավ. nogūtī «եղունգներ» ևն, որոնք վկայում են, որ *սայրը* խմբի լեզուներում, սպասելի s-ի կամ š-ի փոխարեն, նույնպես առկա են *կենտում* լեզուներին բնորոշ հետնալեզվայիններ)⁹⁷, ապա հպաշփականների առկայությունը հունարենում և փոյուգերենում ևս պիտի դիտարկել այդպիսի խառն դրսևորումների համատեքստում: Հետևաբար բոլորովին պատահական չէ, որ հպաշփականներ հանդիպում են *սայրը* լեզուների հետ սահմանային շփման կետում եղած հին հունարենում և փոյուգերենում, այլ ոչ թե արևմտյան տարածույթի որևէ այլ լեզվում: Եթե նկատի ունենանք, որ ոմանք փոյուգերենի, թրակերենի և առհասարակ հնաբալկանյան լեզուների բարբառախմբային (*սայրը*, թե՛ *կենտում*) պատկանելության հարցը համարել են վիճելի⁹⁸, իսկ մեկ այլ տեսակետի համաձայն՝ հունարենը, փոյուգերենը և թրակերենը, հիմք ընդունելով հնչույթաբանական և քերականական մի շարք զուգաբանություններ, պիտի դասել արևելյան բարբառախմբում⁹⁹, ակնհայտ կդառնա, որ արևելյան խմբի լեզուների հետ հունարենին և փոյուգերենին միավորում են ավելի խորքային գործընթացներ, քան կարող են լինել պարզապես սահմանային շփումներով պայմանավորված փոխազդեցությունները: Այդ լեզուների կողմերը, ըստ ամենայնի, հ.-ե. միասնությունից անջատվելուց հետո տևական

96 Օրինակներն ըստ՝ Георгиев В. И., նշվ. աշխ., էջ 138-139:

97 Այդ երևույթը Վ. Գեորգիևին հիմք է տվել մերժելու հ.-ե. լեզուները *սայրը* և *կենտում* խմբերի բաժանելու դրույթի գիտականությունը (տես նույն տեղում, էջ 53-55):

98 Տե՛ս Нерознак В. П., Палеобалканские языки, М., 1978, էջ 12-19:

99 Տե՛ս Порциг В., նշվ. աշխ., էջ 110-117, 314-320:

շրջան, հնարավոր է՝ մինչև հազար տարի, արևելյան խմբի լեզուների կրողների հետ գտնվել են համակեցության ընդհանուր տարածքում՝ փոքրասիական տարածաշրջանում¹⁰⁰: Հետևաբար հպաշփականների առկայությունը հին հունարենում և փոյուզերենում ինչպես ծագումնաբանական, այնպես էլ տարածությային ընդհանուր գործընթացներով, մասնավորապես՝ ենթաշերտային փոխներթափանցմամբ պայմանավորված իրողություն է:

4) Պիտի կարծել, որ փոքրասիական տարածաշրջանի հ.-ե. լեզուներում՝ հնդարիականներում, հայերենում, ինչպես նաև հունարենում և փոյուզերենում հպաշփականների առաջացման գործընթացը սկսվել է գրեթե միաժամանակ կամ ժամանակային ոչ մեծ ընդմիջումով: Փոքրասիական տարածաշրջանի հ.-ե. և ոչ հ.-ե. լեզուներից հայերենի կատարած փոխառությունները, որոնք, ըստ ամենայնի, վերաբերում են առնվազն մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերից (սեմական լեզուներ) մինչև մ.թ.ա. 1-ին հազարամյակի կեսերն ընկած ժամանակահատվածին (մյուս լեզուները)¹⁰¹, հիմք են տալիս ասելու, որ այդ ժամանակաշրջանում հայերենի հպաշփականների համակարգն ամբողջությամբ ձևավորված էր: Իսկ դա նշանակում է, որ հպաշփականների կազմավորումը՝ որպես հ.-ե. հետնալեզվայինների քմայնացման արդյունք, պիտի սկսված լիներ զգալիորեն ավելի վաղ, թերևս մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջերին կամ 2-րդի սկզբներին: Բայց հնարավոր չէ նույնը ասել սլավոնաբարայան լեզուներում հպաշփականների առաջացման ժամանակի մասին: Մասնավորապես սլավոնական հին լեզուներում այդ ժամանակը հասցնում են մինչև մ.թ. 2-րդ հազարամյակի կեսերը¹⁰²: Այդ առումով թերևս իրավունք ունենալ Գեորգիևը՝ գրելով, որ «...քմայնացումը խիստ հաճախադեպ հնչյունաբանական երևույթ է, որը լիովին անկախաբար կարող է տեղի ունենալ տարբեր վայրերում ու տարբեր ժամանակ և կարող է հանգեցնել գրեթե միատեսակ արդյունքների»¹⁰³:

Վարդան Զ. Պետրոսյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են լեզվի տեսության, ընդհանուր և հայ հնչույթաբանության, պատմահամեմատական լեզվաբանության, հին հայերենի տարածմանական և համաժամանակյա ուսումնասիրության հարցերը:

Էլեկտրոնային հասցե՝ vz.petrosyan@ysu.am

100 Մեր ելակետը հ.-ե. նախահայրենիքի առաջավորասիական վարկածն է (տես Գамкрелидзе Т. В., Иванов Вяч. В., նշվ. աշխ., տ. II, էջ 865-870):
 101 Տես Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, I մաս, Եր., 1940, II մաս, Եր., 1951, Ղափանցյան Գ. Ա., Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, Եր., 1961, Զահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան:
 102 Տես Селищев А. М., նշվ. աշխ., էջ 204-205, Бернштейн С. Б., նշվ. աշխ., էջ 302:
 103 Георгиев В. И., указ. соч., с. 53.

Summary

THE ORIGIN OF OLD ARMENIAN OCCLUSIVE-FRICATIVES (Diachronic analysis)

Vardan Z. Petrosyan

Candidate of Sciences in Philology

Key words - occlusive-fricatives, nasalization, phonemic subcategories, Common Indo European Language, Eastern and Western dialect groups, Old Greek, Phrygian.

1/ Like the occlusive-fricatives of other Indo-European languages, the Armenian occlusive-fricative phonemes are the result of the nasalization of the back-lingual occlusives of the common Indo-European language. In fact, common Indo-European language possessed two back-lingual categories - *G and *K with their aspirated and non-aspirated subcategories (comp. *g/*g^h, *k/*k^h) and three types - post-palatal, palatal and labio-velar (comp. *g, *g', *g^ʷ, *k, *k', *k^ʷ). The latter could freely interchange with each other. The prototypes of occlusive-fricatives with a dental occlusive and with ɣsemi-vowel are, in fact, the result of analogical processes.

2/ Apart from Armenian, occlusive-fricative phonemes were common in all old languages of the *Satem* group, in particular in Old Indian. However, they were also typical of Old Greek and Phrygian which have traditionally been ascribed to the western *Centum* dialect group. This provides evidence to conclude that either the process of the formation of occlusive-fricatives had already started during the period when the language bearers were leaving the Indo-European homeland (in Western Asia) or, as some comparative linguists claim, these languages belonged to the eastern dialect group. In either case, the existence of occlusive-fricatives in Old Greek and Phrygian provides evidence for their deeper relations with eastern languages than a simple contact or sub-layer inter-penetrations.

3/ The process of the origin of occlusive-fricatives had started much earlier before the Old Balkan peoples (Greeks, Phrygians, Thracians and others) abandoned their Indo-European homeland. Therefore, it started towards the end of the 3rd millennium or at the start of the 2nd millennium B.C. We have solid grounds to suppose that at least in Armenian that process lasted rather long – until the middle of the 1st millennium B.C.

4/ The fact that, according to the approaches accepted in comparative linguistics, sibilant sounds are considered to be the result of the first nasalization,

and fricatives – of the second one in Armenian and Indian, while in old Slavic languages it is the opposite (in the languages mentioned their origin is ascribed to the time periods too remote from each other (about two to three thousand years) we believe, it comes to suggest that the two types of nasalization were parallel processes or at least, the second started while the first one was already in progress.

Резюме

ПРОИСХОЖДЕНИЕ АФФРИКАТ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

(диахронический анализ)

Вардан З. Петросян

Канд. филол. наук

Ключевые слова - аффрикаты, палатализация, фонологические подклассы, общиндоевропейский язык, группы восточных и западных диалектов, древнегреческий, фригийский.

1) Как и в других индоевропейских языках, в армянском языке также аффрикаты являются результатом палатализации заднеязычных смычных общиндоевропейского языка. Причем в общиндоевропейском были две фонологические серии заднеязычных - *G и *K со своими придыхательными и непридыхательными подклассами (ср.: *g/*g^h, *k/*k^h) и три ряда: веллярные, палатальные и лабиовеллярные (ср.: *g, *g', *g^u, *k, *k', *k^u). Между последними были отношения свободного варьирования. Праформы аффрикат с зубными смычными и полугласным *j*, по всей вероятности, являются результатом аналогических процессов.

2) Кроме армянского, аффрикаты существовали и во всех других древних языках группы сатем, в частности, в древнеиндийском, но они были присущи и древнегреческому и фригийскому, традиционно причисляемым к группе западных диалектов кентум. Это дает основание считать, что либо формирование аффрикат началось уже в период переселения носителей данных языков из индоевропейской прародины (а она находилась в Передовой Азии), либо правы те ученые, которые эти языки также относят к восточной группе диалектов. Во всех случаях, наличие аффрикат в древнегреческом и фригийском является свидетельством их более глубоких связей с восточными языками, чем обычное приграничное общение или субстратные проникновения.

3) Процесс возникновения аффрикат начался раньше, чем палеобалканские народы (греки, фригийцы, фракийцы и др.) покинули свою индоевропейскую родину. Следовательно, он начался в конце третьего либо в начале второго тысячелетия до н. э. Есть основания предполагать, что, по крайней мере в армянском, этот процесс длился довольно долго – до середины первого тысячелетия до н. э.

4) То, что, по принятым в сравнительном языкознании представлениям, в армянском и индийском свистящие считаются результатом первой, а шипящие – второй палатализации, а в древних славянских языках – наоборот, причем их возникновение в указанных языках приписывается периодам, очень отдаленным друг от друга (около двух-трех тысяч лет), думается, скорее всего свидетельствует о том, что указанные два типа палатализации были параллельно протекающими процессами, либо, по крайней мере, второй из них начался на каком-то этапе протекания первого.

REFERENCES

1. “Latinskiy yazyk” (pod obshch. red. **V. N. Yarkho i V. I. Lobody**), M., 1983 (In Russian).
2. “Lingvisticheskiy entsiklopedicheskiy slovar””, M., 1990 (In Russian).
3. “Osnovniye napravleniya strukturalizma”, M., 1964 (In Russian).
4. “Slovar’ drevnerusskogo yazyka (XI-XIV vv.)”, t. IV, M., 1991 (In Russian).
5. **Abrahamyan A. A.**, Grabari dzernark, Yer., 1976 (In Armenian).
6. **Acharian Hrachya**, Hayots greræ, Yer., 1984 (In Armenian).
7. **Acharyan H.**, Liakatar k’erakanut’yun hayots lezvi, hat. 6, Yer., 1971 (In Armenian).
8. **Acharyan Hr.**, Hayeren armatakan bararan, hat. II, Yer., 1973, hat. III, Yer., 1977 (In Armenian).
9. **Aghayan E. B.**, Grabari k’erakanut’yun, girk’ I, Yer., 1964 (In Armenian).
10. **Barrou T.**, Sanskrit, M., 1976 (In Russian).
11. **Benveniste E.**, Klassifikatsiya yazykov, “Novoe v lingvistike”, t. III, M., 1963 (In Russian).
12. **Bernshteyn S. B.**, Ocherk sravnitel’noy grammatiki slavyanskikh yazykov, M., 1961 (In Russian).
13. **Boduen de Kurtene I. A.**, Izbrannye trudy po obshchemu yazykoznaniiyu, t. I, M., 1963, hat. II, M., 1963 (In Russian).
14. **Burs’e E.**, Osnovy romanskogo yazykoznaniiya, M., 1952 (In Russian).
15. **Desnitskaya A. V.**, Sravnitelnoe yazykoznanie i istoriya yazykov, L., 1984 (In Russian).
16. **Djahukyan G. B.**, Hayots lezvi patmut’yun: nakhgrayin zhamanakashrdjan, Yer., 1987 (In Armenian).
17. **Djahukyan G. B.**, Ocherki po istorii dopis’mennovo perioda armyanskogo yazyka, Yer., 1967 (In Russian).
18. **Djahukyan G. B.**, Sravnitel’naya grammatika armyanskogo yazyka, Yer., 1982 (In Russian).
19. **Djaukian G. B.**, Universal’naya t’eoriya yazyka, M., 1999 (In Russian).
20. **Elizarenkova T. Ya.**, Grammatika vediyskovo yazyka, M., 1982 (In Russian).
21. **Elizarenkova T. Ya.**, Sanskrit “Yazyki mira: Indoeuropeyskie yazyki drevnevo i srednevo periodov”, M., 2004 (In Russian).

22. **Evangelisti E.**, Indoevropskie zubnye soglasniye i t'okharskie yazyki, "T'okharskie yazyki", M., 1959 (**In Russian**).
23. **Friedrikh Joh.**, Kratkaya grammatika khetskovo yazyka, M., 1952 (**In Russian**).
24. **Gabrielyan Yu.**, Hayerenə ev nakhahndevropakan lezun, Yer., 2001 (**In Armenian**).
25. **Gamkrelidze T. V., Ivanov Vyach. Vs.**, Indoevropskiy yazyk i indoevropeytsy, t. I-II, Tbilisi, 1984 (**In Russian**).
26. **Georgiev V. I.**, Issledovaniya po sravnitelno-istoricheskomu yazykoznaniyu, M., 1958 (**In Russian**).
27. **Gercenberg L. G.**, Kratkoe vvedenie v indoeuropeistiku, Sankt-Peterburg, 2010 (**In Russian**).
28. **Gorshkov A. I.**, Staroslavjanskiy yazyk, M., 1974 (**In Russian**).
29. **Gukhman M. M.**, Gotskiy yazyk, M., 1958 (**In Russian**).
30. **Hopper P. J.**, Yazyki "decem" i "taihun", "Novoe v zarubezhnoy lingvistike" (NZL), t. XXI, M., 1980 (**In Russian**).
31. **Hyubshman Haynrikh**, Hayagitakan usumasirut'yunner, Yer., 2004 (**In Armenian**).
32. **Hyubshman Haynrikh**, Hayereni k'erakanut'yun, Yer., 2003 (**In Armenian**).
33. **Ivanov V. V.**, Khettskiy yazyk, M., 1963 (**In Russian**).
34. **Ivanov V. V.**, Problema yazykov *centum* i *satəm*, "Voprosy yazykoznaniya", 1958, N 4 (**In Russian**).
35. **Ivanov V. V., Toporov N. V.**, Sanskrit, M., 1960 (**In Russian**).
36. **Khamburgaev G. A.**, Staroslavjanskiy yazyk, M., 1974 (**In Russian**).
37. **Kodukhov V. I.**, Vvedenie v yazykoznanie, M., 1979 (**In Russian**).
38. **Konstantinova O. A.**, Evenkiyskiy yazyk, "Yazyki narodov SSSR", vol. V, L., 1968 (**In Russian**).
39. **Korolyov A. A.**, Khetto-luviyskie yazyki, "Yazyki Azii i Afriki", t. I, M., 1976 (**In Russian**).
40. **Krasukhin K. G.**, Vvedenie v indoevropskoe yazykoznanie, M., 2004 (**In Russian**).
41. **Kumakhov M. A.**, Ubykhskiy yazyk, "Yazyki narodov SSSR", vol. IV, L., 1967 (**In Russian**).
42. **Lambdin Tomas O.**, Uchebnik drevneevreyskogo yazyka, M., 1998 (**In Russian**).
43. **Lomtadize K. V.**, Abkhazskiy yazyk, "Yazyki narodov SSSR", t. IV, L., 1967 (**In Russian**).
44. **Makaev E. A.**, Znachenie armyanskogo yazyka dlya rekonstruktsii obshcheindoevropskogo sostoyaniya, "Patmabanasirakan handes", 1967, N 1 (36) (**In Russian**).
45. **Mayrhofer M.**, Indoevropskaya grammatika, t. 2, Fonetika, "Novoe v zarubezhnoy lingvistike", t. XXI, M., 1980 (**In Russian**).
46. **Meillet A.**, Vvedenie v sravnitel'noe izuchenie v indoevropskiykh yazykakh, M.-L., 1938 (**In Russian**).
47. **Meillet**, Linguistique historique et linguistique générale, Paris, 1921 (**In French**).
48. **Meye A.**, Obshcheslovyanskiy yazyk, M., 1951 (**In Russian**).
49. **Neroznak V. P.**, Grecheskiy yazyk, "Lingvisticheskiy entsiklopedicheskiy slovar", M., 1990 (**In Russian**).
50. **Neroznak V. P.**, Paleobalkanskije yazyki, M., 1978 (**In Russian**).
51. **Otkupshchikov Yu. V.**, Ryady indoevropskiykh gutturalnykh, "Aktuellniye voprosy sravnitel'nogo yazykoznaniya", L., 1989 (**In Russian**).
52. **Pedersen Holger**, Hayeren ev draci lezunerə, Vienna, 1907 (**In Armenian**).
53. **Peterson M. N.**, Ocherk litovskogo yazyka, M., 1955 (**In Russian**).
54. **Petrosian V. Z.**, Hin hayereni erabarabayin kazmut'yunnerə (hamazhamanakya hayecaket), "Hayagitut'yan hartser", 2017, N 1 (10) (**In Armenian**).
55. **Petrosyan V. Z.**, Əndhanur ev hay lezvabanut'yan harcer, Yer., 2015 (**In Armenian**).

56. **Petrosyan V. Z.**, Hin hayereni erkbarafayin kazmut'yuneri hnchuyt'abanakan ev hnchyunabanakan bnutagrərə, "Haykazyan hayagitakan handes", 2018 (**In Armenian**).
57. **Petrosyan V.**, E. D. Polivanovi zugametatarometayin hnchuyt'abanakan hayecakargə, "Lraber hasarakakan gitut'yunneri", 2018, N 2 (**In Armenian**).
58. **Petrosyan V.**, R. Yakobsonə patmakan hnchuyt'abanutyān himnadir, "Lezu ev lezvabanutyun", 2016, N 2 (**In Armenian**).
59. **Petrosyan Vardan Z.**, Hpakan baghadzaynneri hndevropakan hamakargə, "Vēm", 2019, N 2 (66) (**In Armenian**).
60. **Petrosyan Vardan**, Hin hayereni dzaynegh hpakannerə, "Banber Yerevani hamalsarani", 2019, N 1 (**In Armenian**).
61. **Pizani V.**, Obshchee i indoeuropeyskoe yazykoznanie, "Obshchee i indoeuropeyskoe yazykoznanie", M., 1956 (**In Russian**).
62. **Pizani Vittore**, Hndevropakan lezunerī tsgumə, "Patmabanasirakan handes", 1979, N 1 (84) (**In Russian**).
63. **Pizani Vittore**, Hndevropakan lezunerī tsgumə, "Patmabanasirakan handes", 1979, N 1 (84) (**In Russian**).
64. **Polivanov E. D.**, Stati po obshchemu yazykoznaniiyu, M., 1968 (**In Russian**).
65. **Portsig V.**, Chlenenie indoeuropeyskoy yazykovoy oblasti, M., 1964 (**In Russian**).
66. **Rastorgueva V. S.**, Drevneiranskīe yazyki, "Yazyki Azii i Afriki", t. II, M., 1978 (**In Russian**).
67. **Reformatskiy A. A.**, Iz istorii otechestvennoy fonologii, M., 1970 (**In Russian**).
68. **Reformatskiy A. A.**, Vvedenie v yazykoznanie, M., 1967 (**In Russian**).
69. **Saussure Ferdinand de**, Kurs obshchey lingvistiki, **Saussure Ferdinand de**, Trudy po yazykoznaniiyu, M., 1977 (**In Russian**).
70. **Savchenko A. N.**, Sravnitel'naya grammatika indoeuropeyskikh yazykov, M., 1974 (**In Russian**).
71. **Selishchev A. M.**, Staroslavlyanskiy yazyk, t. I, M., 1951 (**In Russian**).
72. **Semerēn'i O.**, Vvedenie v sravnitel'noe yazykoznanie, M., 1980 (**In Russian**).
73. **Serebrennikov B. A.**, Veroyatnostniye obosnovaniya v komprotivistike, M., 1974 (**In Russian**).
74. **Smirnitskiy A. I.**, Drevneangliyskiy yazyk, M., 1955 (**In Russian**).
75. **Sobolevskiy S. I.**, Drevnegrecheskiy yazyk, M., 1940 (**In Russian**).
76. **Sunik O. P.**, Udigeyskiy yazyk, "Yazyki narodov SSSR", t. V, L., 1968 (**In Russian**).
77. **Tronskiy I. M.**, Obshcheindoeuropeyskoe yazykovoє sostoyanie, L., 1967 (**In Russian**).
78. **Trubetskoy N. S.**, Mysly ob indoeuropeyskoy probleme, **Trubetskoy N. S.**, Izbrānnyye trudy po filologii, M., 1987 (**In Russian**).
79. **Vandries Zh.**, Yazyk, M., 1937 (**In Russian**).
80. **Vayan A.**, Rukovodstvo po staroslavlyanskomu yazyku, M., 1952 (**In Russian**).
81. **Yakobson Roman**, Principy istoricheskoy fonologii, **Yakobson Roman**, Izbrānnyye raboty, M., 1985 (**In Russian**).
82. **Zaliznyak A. A.**, Grammaticheskiy ocherk sanskrita, **Kochergina V. A.**, Sanskritsko-russkiy slovar', M., 1978 (**In Russian**).